Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի Հ Ա Ն Ր Ա Պ Ե Տ Ո Ւ Թ Յ Ա Ն
Պ Ե Տ Ա Կ Ա Ն Կ Ա Ռ Ա Վ Ա Ր Մ Ա Ն Ա Կ Ա Դ Ե Մ Ի Ա

Հեռակա ուսուցում 1721 թողարկում
Կառավարման ամբիոն

Հայաստանի Հանրապետությունում ներդրումների խթանման և ներդրումային քաղաքականության կատարելագործման հիմնահարցերը

# Մ Ա Գ Ի Ս Տ Ր Ո Ս Ա Կ Ա Ն Թ Ե Զ

«Կառավարում» մասնագիտությամբ կառավարման մագիստրոսի որակավորման աստիճան հայցելու համար

Կրթական ծրագիր՝ **«Հանրային կառավարում»**

Մագիստրանտ՝ Սաղաթելյան Թերեզա Հարությունի

Ղեկավար՝ Խեչոյան Թերեզա Բաղիշի

Ամբիոնի վարիչ՝ Վիլեն Վիկտորի Խաչատրյան, տ.գ.թ. Դոցենտ

Երևան 2020

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

**ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ**......3

**ԳԼՈՒԽ 1. ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ**......6

1.1 Ներդրումների բովանդակությունը և դերը տնտեսության զարգացման մեջ......6

1.2 Հայաստանի Հանրապետությունում ներդրումային ոլորտը կարգավորող իրավական ակտերը......13

**ԳԼՈՒԽ 2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ**......20

2.1 Ներդրումների կարգավորման միջազգային փորձը......20

2.2 Ներդրումային և գործարար միջավայրի առկա վիճակը ՀՀ-ում......33

**ԳԼՈՒԽ 3. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ԽԹԱՆՄԱՆ ՀԱՄԱՐ**......44

3.1 Օտարերկրյա ներդրումների խթանման միջոցառումները Հայաստանի Հանրապետությունում......44

3.2 Ներդրումային քաղաքականության բարելավմանն ուղղված քայլերը Հայաստանի Հանրապետությունում......53

**ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ**......73

**ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ**......77

# ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

**Թեմայի արդիականությունը**: «Ներդրումների խթանման և ներդրումային քաղաքականության կատարելագործման հիմնահարցերը» Հայաստանի Հանրապետությունում գործող ներդրումային միջավայրի և նրա կատարելագործմանն ուղղված քայլերի մասին աշխատություն է: Այստեղ ներկայացված են և՛ երկրում ներդրումային միջավայրի առկա վիճակը և՛ իրականացվող կամ իրականացվելիք ծրագրերը:

2018 թվականից ի վեր երկրում տեղի են ունեցել մի շարք արմատական փոփոխություններ, որոնք զարկ են տվել երկրի առաջխաղացմանը: Նոր կառավարությունը ուղի է հարթում դեպի կայուն ժողովրդավարությանը և երկրի բարգավաճումը: Հիմնական պայքարը տարվում է աղքատության և գործազրկության շեմի նվազմանը: Մեծ ուշադրություն է դարձվում հատկապես բարձր տեխնոլոգիաների զարգացմանը, ինչը իր հերթին կարող է նպաստել նոր և բարձր վարձատրվող աշխատատեղիների ստեղծմանը: Ներկա պահին նախատեսվում է բարելավել գործարար միջավայրը և շեշտը դնել դեպի Հայաստան ներդրումների աճին:

Ինչ վերաբերում է խնդրահարույց հատվածին մինչ այս ներդրումները ՀՀ շատ հաճախ անկում են գրանցել: Հիմնականում դա կապում են քաղաքական ուժերի փոփոխման և կառավարության կողմից քիչ աջակցման քայլեր ձեռնարկելու հետ: Այս հարցի շուրջ պահանջվում է ներդրումների արդիականացում և հստակ ծրագրի մշակում, որը վստահություն կներշնչի օտարերկրյա ներդրողին՝ իր գործունեությունը ՀՀ-ում ծավալելու նպատակով:

Ներդրումների ծավալմանը խոչընդոտող մյուս խնդիրը երկրի ռազմական վիճակն է: Ինչպես գիտենք Հայաստանի Հանրապետությունը գտնվում է ակտիվ միջպետական կոնֆլիկտի կենտրոնում և դա ռիսկային է դարձնում ներդրումների ծավալումը: Բացի այդ Հայաստանի Հանրապետության բյուջեի մեծակշիռ մասը ուղղվում է հենց ռազմական բյուջե՝ ինչը չի կարող չանդրադառնալ մյուս ոլորտների վրա:

Խնդրահարույց է նաև Հայաստանի աշխարհագրական դիրքը: Չունենալով ելք դեպի ծով և լինելով փակ արևելքից (Ադրբեջան) և արևմուտքից (Թուրքիա) հարևան երկրների

կողմից Հայաստանի առևտրային ճանապարհները անցնում են միայն երկու հարևան երկրների տարածքներով, այն է՝ Վրաստանի և Իրանի: Իր հերթին Իրանի նկատմամբ կիրառվում են մի շարք միջազգային պատժամիջոցներ, որը էլ ավելի մեծ խոչընդոտ է ստեղծում:

**Հետազոտության նպատակներն ու խնդիրները**:
Հետազոտության նպատակներն են ներկայացնել Հայաստանում առկա ներդրումային միջավայրը, կատարվող միջոցառումները և առկա խնդիրները:
Հետազոտության խնդիրներն են ուսումնասիրել ոլորտում առկա հետազոտությունները և գտնել տարբերակներ՝ առկա խնդիրները լուծելու համար:

**Հետազոտության օբյեկտը և առարկան:** Հետազոտվող թեմայի օբյեկտը ներդրումային քաղաքականության ուսումնասիրությունն է և ներդրումային միջավայրի բարելավման ուղիների բացահայտումն է :
Հետազոտվող թեմայի առարկան ներդրումային միջավայրի բարելավման տեսական, հայեցակարգային և ծրագրային հիմնախնդիրներն են և դրանց լուծման ձևերի բացահայտումը:

**Հիմնախնդրի գիտական մշակվածության աստիճանը:** Ներդրումների խթանմանը և ներդրումային քաղաքականության կատարելագործմանը շատերն են անդրադարձել: Աշխատանքներ են տարվել ՄԱԿ- ի գրասենյակի կողմից և հրատարակվել են աշխատանքների արդյունքները: Ներդրումային քաղաքականությանն են անդրադարձել նաև Ամերիկայի, Ռուսաստանի, Ֆրանսիայի համալսարանները, որոնց հովանավորությամբ մի շարք աշխատություններ են լույս տեսել:

**Կառուցվածքն ու ծավալը:** Մագիստրոսական թեզը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացությունից և օգտագործված գրականության ցանկից:

Առաջին գլխում ներկայացված են ներդրումները, ներդրումների տեսակները և Հայաստանի Հանրապետությունում գործող, այս ոլորտը կարգավորող իրավական ակտերը:
Երկրորդ գլխում ներկայացված են ուսումնասիրության համար ընտրված երկրների փորձը՝ ներդրումային միջավայրի բարելավման և ներդրումների գրավման նպատակով: Երկրորդ գլխում ներկայացված են նաև երկրում առկա ներդրումային և գործարար միջավայրի առկա վիճակը և ցուցանիշները միջազգային գնահատման համակարգերում:
Երրորդ գլխում ներկայացված է օտարերկրյա ուղղակի ներդրումների գրավմանն ուղղված միջոցառումները, օտարերկրյա ուղղակի ներդրումների վերաբերյալ Հայաստանի օրենսդրական դաշտը կարգավորող երկու փաստաթղթերը, Հայաստան կատարված ՕՈՒՆ-ների վիճակագրությունը: Այս գլխում ներկայացված են նաև ներդրումային քաղաքականության բարելավմանն ուղղված միջոցառումները և անդրադարձ է արված սփյուռքի կողմից կատարված քայլերին:

Մագիստրոսական թեզը բաղկացած է 78 էջից:

# ԳԼՈՒԽ 1. ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

## 1.1 Ներդրումների բովանդակությունը և դերը տնտեսության զարգացման մեջ

Ժամանակակից աշխարհում ցանկացած երկրի պարտադիր տարրերից են ներդրումները:

Ներդրումներ (Invest, инвестиции) տերմինը կիրառելով մենք հասկանում ենք կապիտալի երկարաժամկետ ներդրում էկոնոմիկայի մեջ, որի նպատակը շահույթ ստանալն է:

Ավելի լայն իմաստով ներդրումներ տերմինի տակ հասկացվում է նաև բոլոր տեսակի սեփականություն համարվող արժեքները, որոնք հնարավոր է ներդնել որոշակի ձեռնարկատիրական գործունեության մեջ:

Ներդրումների դերը երկրի տնտեսության ստաբիլ զարգաման մեջ շատ մեծ է: Ցանկացած երկրի էկոնոմիկայի համար ներդրումների գրավումը դարձել է երկրի զարգացմանն ուղղված հիմնավոր քայլերից մեկը:

Ներդրումները առանցքային բնույթ են կրում երկրի տնտեսության զարգացման մեջ: Ներդրումների քանակային փոփոխությունները հիմնովին կարող են ազդել երկրի զբաղվածության մակարդակի, տարբեր ոլորտների զարգացման, տնտեսության մեջ հիմքային փոփոխությունների վրա:

Ներդրումների ոչ ռացիոնալ օգտագործումը իր հետևից կարող է բերել մի շարք բացասական հետևանքների, որոնցից են ռեսուրսների սառեցումը, որի հետևանքը կարող է լինել թողարկվող արտադրանքի ծավալի կրճատում: Բացի այդ պետք է ուսումնասիրել այն ոլորտը, որտեղ պետք է կատարվի ներդրում, քանի որ ոչ ակտուալ, հնացած ոլորտի կամ ապրանքի ընտրության դեպքում ներդրումը դրական ոչ մի ազդեցություն չի ունենա և կլինի բացարձակապես անիմաստ:

Ներդրումները հաճախ համեմատում են վարկերի հետ, քանի որ երկուսն էլ ֆինանսական աջակցություն են՝ ավելի բարեկեցիկ և զարգացած գործունեության համար: Սակայն ի տարբերություն վարկերի ներդրողի համար ռիսկի չափը ավել է: Ներդրումների էֆֆեկտիվությունը ունի մեծ դեր ցանկացած ոլորտի համար: Անգամ

ներդրումների ծավալի մեծացումը առանց ներդրումների համար նախատեսված հիմքեր ստեղծելու չի կարող հանգեցնել ստաբիլ աճի:

Բացի վերը նշվածից ներդրումները հանդիսանում ենպ բարեկեցության աճի հիմնական ուղղորդող ուժը, ինչը թույլ է տալիս լուծել բնապահպանական և սոցիալական խնդիրները, միաժամանակ բարելավելով բնակչության կենսամակարդակը:[1]

Ուսումնասիրենք ներդրումներին վերաբերող մի շարք հասկացություններ:

**Ներդրումային գործունեություն՝** ներդրումների և գործարարական գործունեության իրականացում, որի նպատակը շահույթ կամ շահավետ պայմաններ ստեղծելն է: Գոյություն ունեն ներդրումների տարբեր դասակարգումներ՝

Ըստ ներդրման օբյեկտի.

**1. Իրական ներդրումներ** (կապիտալի ուղղակի գնում)

Իրենց հերթին իրական ներդրումները լինում են.

1. Շոշափելի ակտիվների ձևով (հիմնական միջոցներ, հող),
2. Հիմանական միջոցների հիմնանորոգում,
3. Ներդրումներ ոչ նյութական ակտիվներում՝ արտոնագրեր, լիցենզիաներ, օգտագործման իրավունքներ, հեղինակային իրավունք, ապրանքային նշաններ, նոու-հաու, մարդկային կապիտալ (կրթություն, գիտություն) և այլն:

**2. Ֆինանսական ներդրումներ** (ֆինանսական ակտիվների միջոցով կապիտալի անուղղակի գնում).

1. Արժեթղթեր,
2. Վարկեր,
3. Լիզինգ,

**3. Սպեկուլյատիվ ներդրում** (Ակտիվների գնում բացառապես գնի հնարավոր փոփոխության համար)

1. Արժույթներ,

[1] https://library.anau.am/images/stories/grqer/Tntesagitakan/nikolaev-invect.pdf

2. Թանկարժեք մետաղներ (մետաղական դեպոզիտարիալիզացված ձևերի տեսքով),
3. Արժեթղթեր (բաժնետոմսեր, պարտատոմսեր, համատեղ նորդրումային հաստատությունների հավաստագրեր և այլն):

Ներդրումները ըստ նպատակի լինում են՝

1. **Ուղղակի ներդրումներ.** Կապիտալ ձևավորող ներդրումներ, ինչպես նաև ընկերության կողմից մեկ այլ ընկերության կանոնադրական կապիտալում կատարված ներդրումներ՝ դրա նկատմամբ վերահսկողություն հաստատելու համար,
2. **Պորտֆելային ներդրումներ.** Ընկերության ներդրումներն արժեթղթերում՝ եկամուտ ստեղծելու կամ այլ նպատակներով,
3. **Իրական ներդրում,**
4. **Ոչ ֆինանսական ներդրում,**
5. **Խելացի ներդրումներ** (կապված մասնագետների վերապատրաստման, դասընթացների հետ):

**Ներդրումները ըստ ժամանակահատվածի լինում են՝**

1. **Կարճաժամկետ** (մինչև մեկ տարի),
2. **Միջնաժամկետ** (1-3 տարի),
3. **Երկարաժամկետ** (ավելի քան 3-5 տարի),

**Ներդրումային ռեսուրսները սեփականության հիման վրա լինում են**

1. **Մասնավոր,**
2. **Պետական,**
3. **Օտար,**
4. **Խառը,**

Աղյուսակ 1-ում ներկայացված են ներդրումային գործունեության հատկանիշները

Աղյուսակ 1[2] *Ներդրումային գործունեության հատկանիշները*

| Ուղղությունը | Ներդրումների բնութագրերը | Ռիսկայնության մակարդակը |
|---|---|---|
| Նյութատեխնիկական բազայի փոխարինում | Համեմատաբար հեշտ է որոշել, ինչպես ըստ ծավալի, այնպես էլ անվանացանկի և պարամետրերի | Փոքր ՝ կապված ներդրման օբյեկտի որակի հետ |
| Նյութական և տեխնիկական բազայի արդիականացում և զարգացում | Այն պահանջում է շուկայի պայմանների վերլուծություն և ձեռնարկության և ապրանքների տեսականու հեռանկարների կանխատեսում | Միջին ՝ կապված շուկայի պայմանների հետ |
| Արտադրական գործունեության ընդլայնում | Պահանջում է ապրանքների մրցունակության, արդյունաբերության ոլորտում ձեռնարկության դիրքի բազմակողմանի վերլուծություն շուկայում | Նշանակալից, կապված է շուկայի պայմանների փոփոխությունների ռիսկի հետ, |
| Նոր գործունեության տիրապետում | Պահանջում է բիզնեսի և շուկայավարման պլանի մանրակրկիտ ուսումնասիրություն | Նշանակալից ՝ կապված շուկայի անկայունության հետ |
| Մասնակցություն ներդրումային բարդ նախագծերին | Պահանջում է վերլուծություն ինչպես նախագծի որակների, այնպես էլ մասնակիցների կազմի մեջ | Խոշոր ՝ կապված երկարաժամկետ ներդրումների և հետաձգված շահույթի ստացման հետ |
| Ներդրումներ արժեթղթերի մեջ | Պահանջվում է արժեթղթերի շուկայի վերլուծություն: Արդյունավետ ներդրմամբ ՝ իրացվելիության բարձր աստիճան: | Էական, կախված է ինչպես արժեթղթերի շուկայի կոնյունկտուրայից, այնպես էլ մակրոտնտեսական իրավիճակից |

Ներդրումները կարող են իրականացվել ինչպես ներքին, այնպես էլ արտաքին աղբյուրների հաշվին: Ներդրումների այս երկու աղբյուրներն էլ հիմնարար դեր ունեն երկրի տնտեսության զարգացման մեջ:

**Երկրի ներքին աղբյուրները**.

Ցանկացած երկրի ընդհանուր խնայողությունների մակարդակը ուղակիորեն կախված է բնակչության, կազմակերպությունների և կառավարության խնայողությունների մակարդակից: Դա նշանակում է, որ բնակչությունը կարող է որոշակի գումար խնայել ապագայի համար, ընկերությունները կարող են վերասահմանել իրենց գործունեության արդյունքում ստացված շահույթի մի մասը, իսկ կառավարությունը կարող է գումարներ կուտակել: Միևնույն ժամանակ, խնայողությունների ծավալը ուղղակիորեն ազդում է

[2] https://works.doklad.ru/view/mog2y3cOiGw.html

երկրում ներդրումների ծավալի վրա, քանի որ միջոցների մի մասը գնում է սպառման, իսկ մնացածը ներդրումների վրա:

Այս ամենից կարող ենք տարբերակել հետևյալ ներքին ներդրումների աղբյուրները՝

ա) **Շահույթ:**

Հաճախ բիզնեսներն ու կազմակերպությունները շահույթը օգտագործում են որպես ներդրման աղբյուր: Նրանց ստացած շահույթի մի մասը բաժին է ընկնում բիզնեսի զարգացմանը, արտադրության ընդլայնմանը և նոր տեխնոլոգիաների ներդրմանը: Ակնհայտ է, որ այն ձեռնարկություններն ու կազմակերպությունները, որոնք այդ նպատակների համար միջոցներ չեն հատկացնում, ի վերջո դառնում են անմրցունակ: Ֆինանսական ռեսուրսների բացակայության դեպքում երբեմն ձեռնարկությունների կողմից փորձ է արվում ռեսուրսներ ձեռք բերել իրենց արտադրանքի գնի բարձրացման հաշվին: Սակայն սա ոչ միշտ է արդյունավետ, քանի որ գների բարձրացումը կարող է հանգեցնել ձեռնարկության նկատմամբ պահանջարկի նվազման: Պահանջարկի նվազման դեպքում խնդիրներ են առաջանում կապված ապրանքի վաճառքի հետ և դա հանգեցնում է արտադրության անկման:

բ) **Բանկային վարկ:**

Բազմաթիվ զարգացած երկրներում բանկային վարկավորումը ներդրումների հիմնական աղբյուրներից մեկն է: Իր հերթին երկարաժամկետ վարկավորումը հատուկ դեր է խաղում, քանի որ այս դեպքում վարկառուի համար բեռը ցածր է, և ընկերությունը ժամանակ ունի «խթանելու» բիզնեսը: Այնուամենայնիվ, բանկային վարկավորման դերը որպես ներդրումների աղբյուր կախված է երկրում բանկային համակարգի զարգացվածությունից և տնտեսական կայունությունից: Երկրում առկա անկայունությունը ի վերջո հանգեցնում է ներդրումային ծրագրերի ֆինանսավորման դժվարությանը:

Ընդհանուր առմամբ, բանկային վարկավորումը նպաստում է արտադրության աստիճանական աճին և, որպես արդյունք, երկրի ընդհանուր տնտեսական վերականգնմանը:

**գ) Արժեթղթերի թողարկում:**

Զարգացած երկրներում արժեթղթերի թողարկումը ներդրումային նախագծերի ֆինանսավորման հիմնական աղբյուրներից մեկն է: Ֆոնդեր ստանալու համար ձեռնարկությունները կարող են թողարկել ինչպես բաժնետոմսեր, այնպես էլ պարտատոմսեր: Միևնույն ժամանակ, արժեթղթերի գնորդները, որպես կանոն, կարող են լինել ցանկացած իրավաբանական և ֆիզիկական անձ, որոնք տիրապետում են ազատ դրամական միջոցների: Հենց նրանք են, որ այս դեպքում հանդես են գալիս որպես ներդրողներ՝ տրամադրելով իրենց սեփական միջոցները ձեռնարկության արժեթղթերի դիմաց:

**գ) Ֆինանսավորում պետական բյուջեից:**

Պետական ներդրումները սովորաբար ուղղվում են սահմանափակ թվով տարածաշրջանային ծրագրերի իրականացմանը և առանձնապես արդյունավետ կառուցվածքային կառույցների ստեղծմանը:

**դ) Ամորտիզացիոն հատկացումներ:**

Միշտ չէ, որ ներքին աղբյուրներից ստացված ֆինանսական ռեսուրսները բավարար են երկրի հաջող տնտեսական զարգացման համար: Սա հատկապես վերաբերում է զարգացող կամ անցումային տնտեսություններ ունեցող երկրներին:

Այս առումով անհրաժեշտ է առանձին դիտարկել ներդրումների արտաքին աղբյուրները:

**Ներդրումների արտաքին աղբյուրները:**

**ա) Օտարերկրյա ուղղակի ներդրումներ:**

Օտարերկրյա ուղղակի ներդրումները ընդհանուր առմամբ կապիտալ ներդրումներն են՝ պարզապես այլ երկրներում: Ուղղակի ներդրումների մեջ ներգրավված է ներդրողը: Ներդրումները կարելի է ուղղակի համարել, եթե օտարերկրյա ներդրողը ունի ձեռնարկության բաժնետոմսերի առնվազն 25% -ը կամ դրանց վերահսկիչ բաժնետոմսը, որի արժեքը կարող է բավականին տարբեր լինել՝ կախված բաժնետերերի բաժնետոմսերի բաշխումից: Ուղղակի ներդրումներ կատարելով օտարերկրյա ներդրողը կարող է ստեղծել լիովին իրեն պատկանող ձեռնարկություն, մասնաճյուղ կամ ներկայացուցչություն, ինչպես նաև ստեղծել համատեղ ձեռնարկություն, դառնալ

գոյություն ունեցող և արդեն գործող ձեռնարկության համասեփականատեր և այլն: Միևնույն ժամանակ, նա միշտ ձգտում է մասնակցել կամ ինքնուրույն ղեկավարել այդ ընկերությունը:

**բ) Պորտֆելային օտարերկրյա ներդրումներ**

Պորտֆելային են կոչվում օտարերկրյա ձեռնարկությունների և կազմակերպությունների արժեթղթերում ներդրումները: Ինչպես նաև այս տեսակի ներդրումները հնարավորություն են տալիս կատարել ներդրումներ օտարերկրյա պետության արժեթղթերում:

Պորտֆելային ներդրումների առանձնահատկությունը կայանում է ներդրողի ներդրում կատարելու դրդապատճառների մեջ: Այսինքն պորտֆելային ներդրում կատարողը շահագրգռված չէ կազմակերպության կառավարման գործում: Նրա նպատակը կայանում է եկամուտ ստանալ արժեթղթերի տիրապետումից (շահաբաժիններ, տոկոսներ, տարբերություն գնման և վաճառքի գների միջև և այլն):

Արտասահմանյան պորտֆելային ներդրումների միջնորդները հիմնականում ներդրումային բանկերն են, որոնց միջոցով ներդրողները մուտք են ստանում այլ երկրի ազգային շուկա:

Որպես արժեթուղթ, որոնցում ներդրում են իրենց միջոցները օտարերկրյա ներդրողները, հիմնականում հանդես են գալիս ձեռնարկությունների բաժնետոմսերը և պարտատոմսերը: Իհարկե մեծ ձեռնարկությունների բաժնետոմսերը ավելի մեծ ուշադրության են դարձվում: Միևնույն ժամանակ, պորտֆելային ներդրումների մասնաբաժինը փոքր և միջին ձեռնարկություններում բավականին ցածր է: Դա պայմանավորված է նման ընկերություններում ներդրումներ կատարելու մեծ ռիսկերով, ինչը դժվարացնում է իրենցով օտարերկրյա ներդրումների ներգրավումը:

**գ) Օտարերկրյա վարկեր:**

1970 - 1980 թվականներին տեղի ունեցավ միջազգային վարկերի կտրուկ աճ, որի արդյունքում նրանք սկսեցին համարվել ներդրումների ևս մեկ աղբյուր: Որպես վարկատու սովորաբար հանդես են գալիս միջազգային կազմակերպությունները (Արժույթի միջազգային հիմնադրամ և այլն) և խոշոր արտասահմանյան բանկերը (Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկ, Deutsche Bank և այլն):

Միջին և երկարաժամկետ վարկեր կարող են տրվել արդյունաբերական և առևտրային ընկերություններին, ձեռնարկություններին, բանկերին, ֆինանսական ընկերություններին, ինչպես նաև ուղղակիորեն պետությանը:
Վերջին տարիներին միջազգային շուկայում հաճախ օգտագործվում է երկարաժամկետ ֆինանսավորման այնպիսի ձև, ինչպիսին է նախագծային ֆինանսավորումը: Այս ֆինանսավորման գործառույթը կայանում է նրանում, որ տրամադրվում են խոշոր վարկեր կոնկրետ արդյունաբերական նախագծերի համար: Այսպիսով երկարաժամկետ վարկավորման այս ձևը իր տեսակով նման է ուղղակի ներդրմանը:[3]

## 1.2 Հայաստանի Հանրապետությունում ներդրումային ոլորտը կարգավորող իրավական ակտերը

Հայաստանի կառավարությունն իրականացնում է գործարար միջավայրի խորը և համապարփակ բարեփոխումներ՝ օտարերկրյա ներդրողների և գործարարների համար առաջարկելով բիզնեսի համար նպաստավոր միջավայր:
Հայաստանի Հանրապետության կառավարությունը ներդրումային ոլորտում առաջնորդվում է «բաց դռների» քաղաքականությամբ, ներդրումային գործունեության հետ կապված հարաբերությունների ազատականացման, օտարերկրյա ներդրողների նկատմամբ ազգային և առավել բարենպաստության ռեժիմների ամրագրման, ներդրումների պատշաճ պաշտպանության և միջազգային առաջադեմ պրակտիկայում ընդունված այլ սկզբունքներով:
Հայաստանում ներդրումային ոլորտում պետական քաղաքականության հիմնական խնդիրներն են՝ ներդրումային միջավայրի բարելավումը, օրենսդրական դաշտի կատարելագործումը և Հայաստանի Հանրապետության տնտեսության մեջ ներդրումների, այդ թվում օտարերկրյա ուղղակի ներդրումների (ՕՈՒՆ) խթանումը:
Հայաստանի Հանրապետությունում ներդրումային ոլորտը կարգավորող հիմնական իրավական ակտն է 1994 թվականին ընդունված «Օտարերկրյա ներդրումների մասին» ՀՀ օրենքը:

[3] https://works.doklad.ru/view/mog2y3cOiGw.html

**«Օտարերկրյա ներդրումների մասին» ՀՀ օրենքը**[4]

Հայաստանի Հանրապետությունում Օտարերկրյա ներդրումները պաշտպանված են օրենքով: Օտարերկրյա ներդրողների համար Հայաստանի Հանրապետությունը ներկայացնում է մի շարք երաշխիքներ և արտոնություններ՝ բիզնեսի զարգացման համար: Ներդրողները գործում են ընդհանուր օրենսդրության համապատասխան, ինչը թույլ է տալիս նրանց հանդեպ կիրառել ոչ խտրական վերաբերմունք:

Որպես օտարերկրյա ներդրում կարող է հանդես գալ՝

1) Արտարժույթը, արժութային այլ արժեքները, Հայաստանի Հանրապետության ազգային դրամը,
2) Շարժական և անշարժ գույքը (շինություններ, շենքեր, սարքավորումներ և նյութական այլ արժեքներ),
3) Բաժնետոմսեր, պարտատոմսեր, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմնաված այլ արժեթղթեր,
4) Արժեք ունեցող մտավոր սեփականություն,
5) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ կամ պայմանագրով նախատեսված տնտեսական գործունեության իրավունքը,
6) Վճարովի ծառայությունը,
7) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված ներդրումների ցանկացած տեսակ,

Հայաստանի Հանրապետությունը ներկայացնում է մի շարք երաշխիքներ օտարերկրյա ներդրողների ապահովության համար: Իրավական դաշտի առումով օտարերկյա ներդրողների իրավունքները հավասար են ՀՀ քաղաքացիների իրավունքների հետ: Միակ արգելքը կամ սահմանափակումը, որ կարող է դրվել ներդրողի առջև այն է, որ կարող են սահմանվել կոնկրետ տարածքներ, որտեղ հնարավոր է ներդրումային գործունեություն ծավալել: Դա կատարվում է ելնելով ազգային անվտանգության ապահովման պահանջներից:

---

[4] http://www.irtek.am/views/act.aspx?aid=88

Այնուամենայնիվ Հայաստանի Հանրապետությունը ունի մի շարք սահմանված երաշխիքներ՝ օտարերկրյա ներդրումների խրախուսման համար.

1) Օտարերկրյա ներդրումները կարգավորող օրենքի մեջ փոփոխություն կատարվելու դեպքում, ներդրման պահից սկսած 5 տարվա ընթացքում, ներդրողի ցանկությամբ կարող է կիրառվել ներդրում իրականացման պահին գործող օրենսդրությունը,
2) Հայաստանի Հանրապետությունում օտարերկրյա ներդրումները ազգայնականացման ենթակա չեն: Պետական մարմինները իրավասու չեն բռնագրավել այն, միայն արտակարգ դրության պայմաններում՝ այն էլ լրիվ փոխհատուցման պայմաններով,
3) Օտարերկրյա ներդրողները ունեն հողի վարձակալության և կառուցապատման իրավունք, ինչպես նաև այն կազմակերպությունները, որոնք գրանցված են Հայաստանի հանրապետությունում կարող են նաև գնել հող.
4) Օտարերկրյա ներդրողների համար նախատեսված է սահմանափակումների բացակայություն՝ աշխատակազմի հավաքագրման նպատակով.

Օտարերկրյա ներդրումները ներգրավելու համար Հայաստանում գործում են մի շարք արտոնություններ:

1) Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած ցանկում ընդգրկված ապրանքների ներմուծումն ազատվում է մաքսատուրքից:
2) ԱԱՀ վճարը հետաձգվում է մինչև 3 տարի ժամկետով ներդրումային ծրագրերի համար նախատեսված ապրանքների և սարքավորումների ներմուծման համար:
3) Օտարերկրյա ներդրողները իրավունք ունեն սեփական արտադրության արտադրանքը արտահանել առանց որևէ լիցենզիայի:
4) Օտարերկրյա ներդրողները ստանում են նաև շահութահարկի արտոնություններ, որը նախատեսված է ներդրումային ծրագրերի շրջանակներում նոր աշխատատեղիների ստեղծման համար;
5) Ազատ տնտեսական գոտու շահագործողները ազատված են շահութահարկից, ԱԱՀ-ից, գույքահարկից և մաքսատուրքից:

6) Օտարերկրյա ներդրողները ստանում են հարկային արտոնություններ սահմանամերձ գոտիներում գործունեություն ծավալելու համար:
7) Ստանում են հարկային արտոնություններ ՏՏ ոլորտի սկսնակ ընկերությունների համար:

**«Ներդրումային քաղաքականության հայեցակարգի» մասին ՀՀ օրենքը**[5]

Հայաստանի Հանրապետության ներդրումային քաղաքականությունը Հայաստանի տնտեսական զարգացման կարևորագույն տարրերից մեկն է: Նրա հիմնական նպատակն է բացահայտել առավելությունները, որի արդյունավետ իրականացման արդյունքում ապահոված է երկրի արդյունաբերական և գիտատեխնիկական զարգացումը:

Հայաստանի Հանրապետության ներդրումային քաղաքականությունը ունի մի շարք նպատակներ՝

1) Երկրում ստեղծել բարենպաստ ներդրումային միջավայր,
2) Ներդրումների համար նախատեսված իրավական դաշտի կայունացում,
3) Վարչարարական խոչընդոտների վերացում,
4) Ներդրումների ներգրավում,
5) Ներդրումները խթանող ենթակառույցների կայացումը,

Հայաստանում ներդրումային ոլորտում պետական քաղաքականության հիմնական խնդիրը ոչ միայն ներդրումների խթանումն է, օրենսդրական դաշտի կատարելագործումը, այլ նաև օտարերկրյա ուղակի ներդրումների (ՕՈՒՆ) գրավումը: Օտարերկրյա ներդրումների գրավման նպատակով Հայաստանի Հանրապետությունում ամրագրված են ներդրումային քաղաքականության մի շարք սկզբունքներ.

1) Թափանցիկություն. Հայաստանում ներդրումներին վերաբերող բոլոր մշակված օրենսդրական ակտերը, փաստաթղթերը բաց են հանրության համար:

[5] http://www.irtek.am/views/act.aspx?aid=30323

2) Բարենպաստ ռեժիմ: Որևէ երկրի ներդրողի նկատմամբ ներդրումների իրականացման և ընդլայնման նկատմամբ ցուցաբերել նույն վերաբերմունքը ինչը տեղացի ներդրողի նկատմամբ:
3) Ազգային ռեժիմ: Ներդրումների գործարկման, ընդլայնման, իրականացման և պաշտպանության համար օտարերկրյա ներդրողների համար կիրառվում է նույն պայմանները, որոնք կիրառվում են տեղացի ներդրողների հանդեպ:
4) Արտոնություններ ներդրումների համար: Արտոնությունները սահմանվում են երկրի սոցիալ-տնտեսական զարգացման նպատակներին համապատասխան: Արտոնությունները պարտադիր կերպով տրվում են թափանցիկությունը և արդյունավետ կառավարումը ապահովելու նպատակով:
5) Գործունեությանը ներկայացվող պահանջներ: Եթե կան որոշակի պահանջներ, որոնք կարող են խոչընդոտել կամ սահմանափակել ներդրումների և առևտրի ընդլայնմանը, դրանք չեն սահմանվում:
6) Օտարում և փոխհատուցում: Ներդրումները ուղղակիորեն չեն կարող օտարվել, ազգայնացվել: Նաև չեն կարող կատարվել այնպիսի գործողություններ որոնք օտարման կամ ազգայնացման հավասարազոր գործողություններ են:
7) Փոխարկելիություն: Անխտիր ապահովել ներդրումների հետ կապված միջոցների ազատ և անհապաղ փոխանցումը՝ ազատ փոխարկելի արտարժույթով: Միջոցներ են շահույթները, դիվիդենդները, ռոյալթիները, վարկային վճարումները:
8) Վեճերի լուծում: Սկբունքներից մեկն է լուծել վեճերը խորհրդակցությունների և բանակցությունների միջոցով, որոնք կարող են ծագել պետության և ներդրողի, կամ երկու մասնավոր ներդրողների միջև օտարերկրյա ներդրումների կապակցությամբ:
9) Անձնակազմի մուտքը: Օտարերկրյա ներդրումների հետ կապված աշխատանքներ իրականացնելու նպատակով թույլատրվում է օտարերկրյա տեխնիկա և անձնակազմի մուտքը և կեցությունը Հայաստանի Հանրապետությունում:
10) Կրկնակի հարկման բացառում: Կրկնակի հարկումը բացառվում է օտարերկրյա ներդրումների մասով:

**Հայաստանի Հանրապետության և այլ պետությունների միջև ներդրումների խրախուսման և փոխադարձ պաշտպանության մասին կնքված համաձայնագրերը**

Հայաստանի Հանրապետությունը ստորագրել է «ներդրումների խրախուսման և փոխադարձ պաշտպանության մասին» երկկողմ համաձայնագրեր 44 երկրների հետ: Այդ գործընթացը կրում է շարունակական բնույթ:

Աղյուսակ 2-ում ներկայացված են երկրների ցանկը:

Աղյուսակ 2 [6] *Հայաստանի Հանրապետության և այլ պետությունների միջև ներդրումների խրախուսման և փոխադարձ պաշտպանության մասին կնքված համաձայնագրերի ցանկ*

**ՑԱՆԿ**
**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՅԼ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋԵՎ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ԽՐԱԽՈՒՍՄԱՆ ԵՎ ՓՈԽԱԴԱՐՁ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ԿՆՔՎԱԾ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԵՐԻ**

| N | Պետություն | Ստորագրվել է | Վավերացվել է | Ուժի մեջ է մտել |
|---|---|---|---|---|
| 1. | Արգենտինայի Հանրապետություն | 16.04.1993 | 27.09.1993 | 10.10.1994 |
| 2. | Ավստրիայի Հանրապետություն | 17.10.2001 | 09.10.2002 | 01.02.2003 |
| 3. | Ամերիկայի Միացյալ Նահանգներ | 23.09.1992 | 26.09.1995 | 29.03.1996 |
| 4. | Արաբական Միացյալ Էմիրություններ | 22.07.2016 | 05.10.2017 | 21.11.2017 |
| 5. | Բելառուսի Հանրապետություն | 26.05.2001 | 21.11.2001 | 10.02.2002 |
| 6. | Բուլղարիայի Հանրապետություն | 10.04.1995 | 29.08.1995 | 27.03.1996 |
| 7. | Բելգիայի Թագավորություն-Լյուքսեմբուրգի Մեծ Դքսություն | 07.06.2001 | 20.02.2002 | 19.12.2003 |
| 8. | Գերմանիայի Դաշնային Հանրապետություն | 21.12.1995 | 23.06.1997 | 04.08.2000 |
| 9. | Եգիպտոսի Արաբական Հանրապետություն | 09.06.1996 | 08.12.2005 | 21.02.2006 |
| 10. | Թուրքմենստան | 19.03.1996 | | |
| 11. | Իրանի Իսլամական Հանրապետություն | 06.05.1995 | 14.11.1995 | 26.02.1997 |
| 12. | Իրաքի Հանրապետություն | 07.11.2012 | 17.06.2016 | 28.07.2016 |
| 13. | Իտալիայի Հանրապետություն | 23.07.1998 | 11.10.2000 | 12.12.2000 |
| 14. | Իսրայելի Պետություն | 19.01.2000 | 21.03.2001 | 25.06.2003 |
| 15. | Լատվիայի Հանրապետություն | 07.10.2005 | 27.02.2007 | 21.04.2007 |
| 16. | Լիբանանի Հանրապետություն | 01.05.1995 | 29.08.1995 | 01.10.1998 |
| 17. | Լիտվայի Հանրապետություն | 25.04.2006 | 27.02.2007 | 16.03.2007 |
| 18. | Կանադայի Հանրապետություն | 08.05.1997 | 17.03.1999 | 29.03.1999 |
| 19. | Կատարի Պետություն | 22.04.2002 | 23.10.2002 | 08.10.2007 |
| 20. | Կիպրոսի Հանրապետություն | 18.01.1995 | 12.06.1996 | 03.08.1998 |
| 21. | Կորեայի Հանրապետություն | 19.10.2018 | 21.06.2019 | 03.10.2019 |

[6] https://mineconomy.am/media/9448/BIT_arm_01.11.2019.pdf

| | | | | |
|---|---|---|---|---|
| **22.** | Հնդկաստանի Հանրապետություն | 23.05.2003 | 27.04.2004 | 30.05.2006 |
| **23.** | Հորդանանի Հաշիմյան Թագավորրություն | 29.10.2014 | 05.10.2017 | 22.11.2017 |
| **24.** | Հունաստանի Հանրապետություն | 25.05.1993 | 13.10.1993 | 28.04.1995 |
| **25.** | Ղազախստանի Հանրապետություն | 06.11.2006 | 25.02.2008 | 01.08.2010 |
| **26.** | Ղրղզստանի Հանրապետություն | 04.07.1994 | 29.08.1995 | 26.11.1995 |
| **27.** | Ճապոնիա | 14.02.2018 | 28.03.2019 | 15.05.2019 |
| **28.** | Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորություն | 27.05.1993 | 13.10.1993 | 11.07.1996 |
| **29.** | Նիդերլանդների Թագավորություն | 10.06.2005 | 02.12.2005 | 01.08.2006 |
| **30.** | Շվեյցարիայի Համադաշնություն | 19.11.1998 | 09.10.2002 | 04.11.2002 |
| **31.** | Շվեդիայի Թագավորություն | 08.02.2006 | 25.02.2008 | 01.05.2008 |
| **32.** | Չինաստանի Ժողովրդական Հանրապետություն | 04.07.1992 | 06.10.1992 | 17.03.1993 |
| **33.** | Ռուսաստանի Դաշնություն | 15.09.2001 | 02.12.2005 | 08.02.2006 |
| **34.** | Ռումինիայի Հանրապետություն | 20.09.1994 | 11.10.1995 | 24.12.1995 |
| **35.** | Սինգապուրի Հանրապետություն | 01.10.2019 | | |
| **36.** | Սիրիայի Արաբական Հանրապետություն | 17.06.2009 | 16.11.2009 | 02.02.2010 |
| **37.** | Վիետնամի Սոցիալիստական Հանրապետություն | 01.02.1993 | 28.04.1993 | |
| **38.** | Վրաստան | 04.06.1996 | 18.02.1997 | 18.01.1999 |
| **39.** | Տաջիկստանի Հանրապետություն | 03.04.2002 | 04.11.2002 | 18.11.2002 |
| **40.** | Ուկրաինա | 07.10.1994 | 16.01.1996 | 07.03.1996 |
| **41.** | Ուրուգվայի Արևելյան Հանրապետություն | 06.05.2002 | 25.03.2003 | 15.12.2013 |
| **42.** | Քուվեյթի Պետություն | 25.06.2010 | 25.02.2013 | 04.09.2013 |
| **43.** | Ֆրանսիայի Հանրապետություն | 04.11.1995 | 05.08.1996 | 21.06.1997 |
| **44.** | Ֆինլանդիայի Հանրապետություն | 05.10.2004 | 27.02.2007 | 20.04.2007 |
| | **Ընդամենը** | **44** | **42** | **41** |

# ԳԼՈՒԽ 2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

## 2.1 Ներդրումների կարգավորման միջազգային փորձը

Մասնավոր ներդրումները օտարերկրյա ներդրումների հիմնական մասն են կազմում: Շատ դեպքերում դա եկամտաբեր ընկերություն է, որի ազգային շուկան շատ նեղ է դառնում և կարիք է առաջանում մեծանալ և դուրս գալ միջազգային շուկա: Այն երկրները, որտեղ չի երաշխավորվում ներդրողի ապահովությունը և շահութաբերությունը իհարկե վանում են ներդրումներ կատարելու գործընթացում: Այդ իսկ պատճառով երկրի էկոնոմիկա ներդրողների կապիտալի ներդրման համար պարտադիր է ստեղծել բարենպաստ պայմաններ:

Համաշխարհային էկոնոմիկայի համար օտարերկրյա ներդրումների խրախուսումը դարձել է կարևորագույն խնդիրներից մեկը: Նրանում հետաքրքրված են ինչպես զարգացող, այնպես էլ զարգացած երկրները:

Ամեն երկիր յուրահատուկ մոդել է որդեգրել իր տնտեսության աճը ապահովելու նպատակով: Իրենց մոդելներով միմյանց նման են եվրոպական երկրների, հատկապես Եվրոպական միության երկրների երկրները: Այս երկրների զարգացմանն ուղղված քայլերում մեծ ուշադրություն դարձվում է մարդկային ռեսուրսին և բազմաթիվ նոր ծրագրեր ստեղծվում են հենց մարդկային ռեսուրսի գրավման և լավագույն մասնագետներին պահելու նպատակով: Պետք է առանձնացնել Գերմանիայի Դաշնությունը, որի ներդրումային միջավայրի բարելավման մոդելը ամենից կատարելագործվածն է և ամենից ակնառու դրական արդյունք տվածը: Այստեղ նույնպես կիզակետում գտնվում են մարդկային կարողությունները: Ծրագրեր են մշակվում «ուղեղների» գրավման համար, ինչը արդեն իր արդիականությունը ապացուցել է:

Փոքր ինչ այլ է արևելյան երկրների մոդելը: Այստեղ նույնպես ուշադրություն է դարձվում մասնագիտական աշխատանքին, սակայն արևելյալ մոդելի պարագայում մեծ է նաև պետության դերը՝ այն է չխառնվելու և չխանգարելու գործում: Պետությունը պարզապես հսկող և կարգավորող դիրքում է գտնվում, բայց ոչ որոշումներ կայացնող:

Աղյուսակ 3-ում ներկայացված են տարբեր երկրների ներդրումային քաղաքականության մոդելները:

Աղյուսակ 3 *Երկրների ներդրումային քաղաքականության մոդելները*[7]

| Հատկանիշներ | Մոդելներ | | |
|---|---|---|---|
| | Ամերիկյան | Ճապոնական | Թայվանյան |
| Նպատակ | Մասնավոր ներդրումների առավելագույն ներգրավում | Պետական և մասնավոր ներդրումների արդյունավետ օգտագործում | Արտահանման զարգացման համար մասնավոր ներդրումների խթանում |
| Հիմնական նպատակ | Հարկային մարմիններ մասնավոր ներդրողների համար | Մասնավոր ներդրողների պետական ֆինանսավորում | Պետական ենթակառուցվածք, որը համակարգում է մասնավոր ներդրողներին |
| Կայանալու պայմաններ | Զարգացած արժեթղթերի շուկա<br>Բորսայի առաջատար դերը | Ուժեղ մասնավոր հատված<br>Պետական ուժեղ ապարատ | Մասնավոր արտահանման ձեռնարկությունների զարգացած ցանց |
| Պետության դերը | Տեղեկատվական աջակցություն<br>Ենթակառուցվածքների ներդրում | Վերահսկողություն բանկային համակարգի վրա<br>Ներդրումային ռեսուրսների արտոնյալ տրամադրումը մասնավոր կորպորացիաներին | Նոր բյուրոների ֆինանսավորումը, որոնք ներգրավված են նոր տեխնոլոգիաների մշակմանը<br>Կոնցեսիոն վարկավորում մասնավոր ներդրողներին |
| Թերությունները | Խնայելու խթանների պակասը և կուտակման կտրուկ աճի անհնարինությունը | Ներդրումների պլանավորման գործընթացի քաղաքականացում | Արտահանման ուղղվածությունը նեղացնում է ներքին տնտեսության համար ներդրումային ներուժի շրջանակը |

## Գերմանիայի փորձը

Շատ երկրներ ձեռք են բերել ներդրումների գրավման մեծ փորձ: Բոլոր երկրների մեջ ամենից փորձունակը հանդիսանում է Գերմանիան, որի մեթոդաբանության ուսումնասիրության և պրակտիկ կիրառման դեպքում հնարավոր է բարձրացնել բնակչության բարեկեցության մակարդակը, բարելավել տնտեսությունը, խթանել զբոսաշրջիկների ներգրավումը, աշխատավարձերի բարձրացումը, գործազրկության կրճատումը, ինչպես նաև նվազեցնել հասարակության սոցիալական լարվածությունը: Գերմանիան գտել է ներդրումների գրավման մի շարք ալտերնատիվ տարբերակներ: Այսպես փոքր ձեռնարկությունների ներկայացուցիչներին ուղարկելով տարբեր միջազգային հանդիպումների, շուկաների և ցուցադրությունների, նա ոչ միայն ևս մեկ

[7] https://cyberleninka.ru/article/n/investitsionnaya-politika-zarubezhnyh-stran-metody-usloviya-nedostatki/viewer

անգամ խոսում է իր երկրի մասին, այլ նաև ուշադրություն գրավում իր արտադրանքի կամ ծառայության վրա:

Դա տեղի է ունենում մի քանի տարբերակով:

1. Պետական բյուջեի հաշվին միջազգային շուկաներ և ցուցադրություններ են ուղարկվում փոքր և միջին բիզնեսի ներկայացուցիչները,
2. Գերմանիա են հրավիրվում տարբեր օտարերկրյա ձեռնարկատիրությունների ներկայացուցիչները,
3. Իր հերթին Գերմանիան աջակցում և պետական բյուջեից ֆինանսավորում է հատկացնում փոքր բիզնեսի ներկայացուցիչներին՝ միջազգային ցուցահանդեսների մասնակցության համար՝ եթե ձեռնարկության սեփական միջոցները չեն բավականացնում այն իրականացնելու համար,
4. Ստեղծվում են հատուկ պայմաններ ձեռնարկատերերի համար: Տրվում են շատ ցածր տոկոսով վարկեր, որոնք հնարավոր է սկսել վճարել բիզնեսը բացելուց 10 տարի հետո:

Գերմանիայի կառավարությունը մի շարք ծրագրեր է մշակել փոքր և միջին բիզնեսի օժանդակման համար: Ծրագիրը իր մեջ ներառում է տարբեր ուղղվածություններ, որոնցից են՝

1. Հարկային դաշտի բարեփոխում, որի արդյունքը կլինի զարգացման համար էլ ավելի հարմար պայմանների ստեղծումը,
2. Արտաքին շուկայի համար երաշխիքներ ստեղծելը,
3. Ներդրումների համար վենչուրային կապիտալի մոբիլացում,
4. Բյուրոկրատական սահմանափակումների վերացում,
5. Վարկային միջնորդների ստեղծում և ֆինանսական հնարավորությունների ընդլայնում,
6. Տնտեսության նորարար բաղադրիչի ամրապնդում,
7. Ձեռնարկատիրական մշակույթի զարգացում,

Փոքր և միջին բիզնեսի օժանդակման համար Գերմանիայի կառավարությունը մշակեց և ընդունեց օրենք, ըստ որի ձեռնարկատիրությունների գրանցումը հնարավոր է

պետռեգիստրում գրանցել համացանցի միջոցով: Նորաստեղծ ձեռնարկատերերի համար ստեղծվեց վեբ կայք www.startotheke.de, որտեղ գրանցումից բացի հասանելի են բազմաթիվ նյութեր:

Վերակառուցման և զարգացման բանկը 50% ծածկույթի երաշխիք է տալիս վարկերի համար, որոնք փոքր ձեռնարկությունները ստանում են շրջանառության միջոցները համալրելու համար:

Գերմանիայի կառավարությունը նաև ստեղծել է «Սեփական կապիտալը միջին ձեռնարկության համար» ծրագիրը: Այս ծրագրի համաձայն կայուն ձեռնարկությունների հետագա զարգացման համար կարող է տրվել ֆինանսավորում 500 հազ. մինչև 5 միլիոն եվրո արժողությամբ, 7-8 տարի ժամկետով, և 7 տարի երկարաձգման հնարավորությամբ:

Գերմանիայում գործում է պետական ծրագիր՝ կրթական մակարդակը բարձրացնելու նպատակով, որը թույլ է տալիս ձեռնարկատերերին, որոնք ունեն 5 և ավել տարիների աշխատանքային փործ, ուղարկել վերապատրաստավորման՝ պետբյուջեի հաշվին:

Երկրի փոքր և միջին ընկերությունները արտահանում են իրենց ապրանքները, ինչպես նաև ստեղծում են բիզնես պրոեկտներ հենց արտերկրում: Այդ իսկ պատճառով Գերմանիան ակտիվորեն աշխատում է Համաշխարհային Առևտրային Կազմակերպությունում և նպաստում է Եվրոմիության նախաձեռնությանը, ըստ որի արտոնություններ են տրվում երրորդ երկրների հետ առևտրային կապերի լավացման համար:[8]

**KfW Բանկային խումբը** (KfW Bankengruppe) 2008 թվականից գործարկեց փոքր բիզնեսներին վարկ տրամադրելու ծրագիր: Փոքր և միջին բիզնեսի ընկերություններին, որոնք չունեն ելք դեպի արտասահմանյան շուկա, բանկային ընկերությունը տրամադրում է վարկեր **KfW հատուկ ծրագրի սահմաններում:**[9]

Որպես աշխարհի առաջատար բանկերից մեկը ՝ KfW Banking Group-ը ջանքեր է գործադրում զարգացնելու տնտեսական, սոցիալական և բնապահպանական

[8] https://law-journal.ru/files/pdf/201705/201705_19.pdf
[9] https://taschkent.diplo.de/uz-ru/themen/wirtschaft/kfw-seite/1464930

ոլորտները: KfW Development Bank- ը KfW Bankengruppe ֆինանսական խմբի անդամ է, որը պատասխանատու է գործընկեր երկրների հետ ֆինանսական համագործակցության համար, մինչդեռ գերմանական ներդրումների և զարգացման հասարակության աջակցություն է տրամադրում մասնավոր ձեռնարկություններին: Կառավարության անունից KfW Development Bank-ը ֆինանսավորում է ներդրումները և հարակից խորհրդատվական ծառայությունները, ինչպես նաև այն միջոցառումները, որոնք ուղղված են զարգացող երկրների զարգացմանը:

Դրանից բացի, KfW զարգացման բանկը աջակցում է կրթության զարգացմանը շինարարական մասնագիտությունների ոլորտում:

Միջազգային համագործակցության գերմանական ընկերության (GIZ) հետ սերտ համագործակցության արդյունքում KfW- ն զարգացնում է աշխատանքի վրա հիմնված ուսուցումը և դրանով իսկ նպաստում է շրջանավարտների աշխատանքի հնարավորությունների բարելավմանը: KfW զարգացման բանկը ֆինանսավորում է ժամանակակից սարքավորումներով հագեցումը, ուսումնական նյութերի հրապարակումը և ուսուցիչների վերապատրաստումը:

KfW Զարգացման Բանկը տարածաշրջանի առողջապահության ոլորտում ամենակարևոր դոնորներից մեկն է: Հիմնական ոլորտները մայրերի և երեխաների առողջության բարելավումն են ինչպես նաև դեռևս տարածված տուբերկուլյոզի դեմ պայքարը: Զարգացման Բանկն իր ծրագրերով աջակցում է առողջապահության արդիականացմանը, այդ նպատակով բանկը մշտական կապ է պահում առողջապահության ոլորտում իր գործընկերների հետ, մատակարարում է ժամանակակից բժշկական սարքավորումներ և պարագաներ, տրամադրում է լայն խորհրդատվական ծառայություններ և ապահովում է առաջատար դասընթացներ առողջապահության ոլորտի մասնագետների համար:

Գերմանական փոքր և միջին ձեռնարկությունների մոտ 90% -ը մասնակցում է տարբեր տեսակի արտերկրում կազմակերպվող ցուցահանդեսների և տոնավաճառների: Կառավարության աջակցությամբ գերմանական կազմակերպությունները մասնակցել են 268 ցուցահանդեսների և տոնավաճառների, այդ թվում 21 մասնագիտացված

ցուցահանդեսների (վերականգնվող էներգիայի աղբյուրներ և էներգաարդյունավետության տեխնոլոգիաներ):

**Ամերիկայի Միացյալ Նահանգների փորձը**[10]

Օտարերկրյա ներդրումները գրավում են ԱՄՆ-ի իշխանությունների և հասարակական կազմակերպությունների ուշադրությունը:

Օտարերկրյա ուղղակի ներդրումները (ՕՈՒՆ) առանձնահատուկ նշանակություն ունեն ԱՄՆ տնտեսության համար: Ընդհանուր առմամբ վերջին 10 տարվա ընթացքում 1.7 տրիլիոն դոլարի ներդրում է արվել: ՕՈՒՆ-ի զգալի մասը բաժին է ընկնում ԱՄՆ-ի արտադրական հատվածին: Միայն 2018 թվականին ԱՄՆ-ի էկոնոմիկա է մուտք եղել 78 միլիարդ դոլար արժողությամբ օտարերկրյա ներդրում, որոնք ուղղվել են արտադրական ոլորտի բարելավմանը: Վերջին 20 տարվա ընթացքում ՕՈՒՆ- ի ցուցանիշը եղել է ամենացածրը 15%՝ 2004 թվականին և ամենաբարձրը 81%՝ 1998 թվականին: Ամենից շատ օտարերկյա ներդրումներ կատարվել են մեծածախ և մանրածախ առևտրի (2010 թ. 21%) ինչպես նաև արդյունաբերության (2010 թ. 14%) ոլորտներում: 1997 թվականից սկսած մնացած ներդրումների շուրջ երկու երրորդը բաժին է ընկնում տեղեկատվական ընկերություններին, հանքարդյունաբերական ընկերություններին և ոչ բանկային վարկային կազմակերպություններին: Շատ քիչ ՕՈՒՆ-է հոսում դեպի շինարարություն, տրանսպորտային ծառայություններ և սպասարկման այլ ոլորտներ:

Միացյալ Նահանգներում հատուկ օրենք, որը կառավարում է օտարերկրյա ներդրումները գոյություն չունի: Այնուամենայնիվ, գոյություն ունեն օրենսդրական ակտեր, որոնք ազդում են երկրի ներսում օտարերկրյա ձեռնարկատերերի գործունեության վրա: Օրենսդրական ակտերը կարգավորում են երկրում ներդրումները և հավասարապես են գործում տեղի և արտասահմանյան ներդրումների վրա:

Արտասահմանյան ներդրումների հանձնաժողովը հատուկ դեր է խաղում ուղղակի ներդրումների կարգավորման մեջ: Հանձնաժողովը իրավունք ունի քննարկման ներկայացնել առավել կարևոր ներդրումային ծրագրերը և որոշում կայացնել

[10] https://law-journal.ru/files/pdf/201705/201705_19.pdf

թույլատրելու կամ արգելելու վերաբերյալ: Եթե գործունեության ընթացքում օտարերկրյա ներդրողը ձեռք է բերում ամերիկյան ընկերության բաժնետոմսեր, որոնք կարող են ազգային անվտանգության համար նշանակալից դեր խաղան, պետք է պարտադիր կերպով այդ մասին ծանուցվի արտասահմանյան ներդրումների հանձնաժողովին: Ծանուցումները երրորդ անձի կողմից չեն ընդունվում: Այն դեպքերում, երբ գործարքի վերաբերյալ, հանձնաժողովին ծանուցում տրամադրված չի լինում, հանձնաժովը կարող է պարտադրել տրամադրել ինֆորմացիա:

Գործարքի վերանայումը սկսվում է այն պահից, երբ հանձնաժողովը հավաքած է լինում բավարար տվյալներ ներդրողի վերաբերյալ: Վերանայման առաջին էտապը տևում է 30 օր, որոնց ընթացքում հանձնաժողովն պետք է համապատասխան տեղեկատվություն ուղարկի բոլոր հետաքրքրված դաշնային գերատեսչություններին և ստանա նրանց կողմից դրական որոշում: Հանձնաժողովի կողմից պատասխանները վերլուծելուց հետո ուսումնասիրում են՝ արդյոք տվյալ գործարքը չի հակասում ազգային անվտանգությանը: Եթե բավարար տեղեկատվություն հնարավոր չի լինում հավաքագրել առաջին էտապում, կամ հանձնաժողովի մոտ գործարքի վերաբերյալ առաջացել են կասկածներ, հանձնաժողովը իրավունք ունի գործարքի վերանայումը հետաձգել 45 օրով: Այդ ընթացքում կատարվում է համապատասխան տեղեկատվության հավաքագրում և տեղի են ունենում հավելյալ հանդիպումներ: Ժամկետի սպառվելուց հետո հանձնաժողովը ԱՄՆ նախագահին է տրամադրում գործարքը՝ իր բոլոր տեղեկություններով և մանրամասներով: Նախագահը պարտավոր է 15 օրում որոշում կայացնել, արդյոք տվյալ գործարքը կարող է վտանգ ներկայացնել երկրի համար թե ոչ: Նախագահը իրավունք ունի հաստատել կամ ամբողջությամբ արգելել, ինչպես նաև հետաձգել գործարքի ուժի մեջ մտնելը: Այդ ընթացքում նա կողմերին առաջարկություններ է անում՝ գործարքի պայմանների վերանայման վերաբերյալ: Գործարքի հաստատման ամբողջ ընթացքը չպետք է գերազանցի 90 օրը:

Ինչ վերաբերում է գործարքի արգելափակմանը, նման փորձ դեռ չի եղել: Հիմնականում խանգարող հանգամանքների առկայության դեպքում, հանձնաժողովի կարգադրությամբ վերանայվել և փոփոխման են ենթարկվել խանգարող հանգամանքները: Միայն որոշ դեպքերում, երբ փոփոխված պայմաններ են ի հայտ եկել,

օտարերկրյա ներդրողները հրաժարվել են գործարքից, սակայն գործարքը կայացել է, քանի որ, որպես ներդրող հանդես են եկել ԱՄՆ-ի ձեռնարկատերերը: ԱՄՆ-ի կառավարության այս քայլերի շնորհիվ նոր կապ է հաստատվել ձեռնարկատերերի հետ, ապահովելով տնտեսության հետագա աճը, բայց միևնույն ժամանակ նվազագույնի հասցնելով ազգային անվտանգության սպառնացող վտանգները:

Առևտրի դեպարտամենտի տնտեսական վերլուծության բյուրոն (BEA) առանձնահատուկ դեր ունի Ամերիկայի Միացյալ Նահանգներում օտարերկրյա ներդրումները կարգավորելու գործում: Բյուրոն զբաղվում է օտարերկրյա ներդրումների ուսումնասիրությամբ և տվյալներ է ներկայացնում առավել արդյունավետ ոլորտների հետագա զարգացման վերաբերյալ: Բացի դրանից բյուրոն տրամադրում է նաև ամբողջ երկրի տարածքով իրականացվող ներդրումային ծրագրերի վերաբերյալ տեղեկատվություն: Բյուրոյին պետք է տեղեկացվի և համապատասխան տվյալներ տրամադրվի եթե օտարերկյա կազմակերպությունը կամ մասնավոր անձը ամերիկյան ընկերությունում գնում է բաժնետոմսերի 10% և ավելին, կամ սեփականատեր է դառնում ամերիկյան ձեռնարկության կամ համարժեք գույքի, որի ընդհանուր արժեքը գնահատվում է ավելի քան 1 միլիոն դոլար: Այս գործարքի երկու կողմերն էլ՝ ինչպես վաճառողը, այնպես էլ միջնորդը, պետք է օրենքին համապատասխան տեղեկացնեն Բյուրոյին:

Ֆինանսական տարվա ավարտին այն ընկերությունները, որոնք գնահատվում են ավելի քան 1 միլիոն դոլար, և առնվազն 10% -ով վերահսկվում են օտարերկրյա ընկերության կողմից, պետք է իրենց գործունեության մասին մանրամասն հաշվետվություն տրամադրեն: Զեկույցում պետք է նշվեն վաճառքի ծավալը, ընկերությանը պատկանող գույքի չափը և տարեկան եկամտի ծավալը: Այսպիսով, առևտրի դեպարտամենտի տնտեսական վերլուծության բյուրոն ունի մանրամասն տեղեկություններ ԱՄՆ տնտեսության մեջ օտարերկրյա ներդրումների վերաբերյալ:

**Չինաստանի փորձը**

Չինաստանը կուտակել է հարուստ փորձ՝ օտարերկրյա ներդրումների գրավման առումով: Այժմ Չինաստանը ռեկորդային բարձր ցուցանիշով ներդրումների գրավման առաջատար երկիրն է: Այս ցուցանշին հնարավոր է եղել հասնել այն հանգամանքի շնորհիվ, որ ձեռնարկությունների ճնշող մեծամասնությունը մասնավոր են այլ ոչ թե պետական: Բացի այդ մի շարք պետական ձեռնարկություններ փոխանցվել են մասնավորի կողմից կառավարման: Այս ամենը արվել է այն նպատակով, որ անշահութաբեր կազմակերպությունները փոխանցվելով մասնավոր ձեռնարկատերերին դառնան եկամտաբեր:

Չինաստանում մեծ քանակ են կազմում անապահով ընտանիքները, այդ իսկ պատճառով որոշում է կայացվել, որ պետական ձեռնարկությունների մասնավորեցումից որոշակի գումար հատկացվի նաև անապահով ընտանիքների աջակցության համար: Այդ գործարքներից ստացված հասույթը ուղորդվում է նաև դեպի առողջապահական համակարգը, սոցիալական ապահովության համակարգը և կենսաթոշակային համակարգը: Այս խնդրի լուծման մեկ այլ ճանապարհներից է փոքր բիզնեսին աջակցությունը և զարգացումը:

Այս ամենի հետ մեկտեղ Չինաստանի կառավարությունը մտադիր չէ ամբողջությամբ հրաժարվել տնտեսության պետական կարգավորումից, այլ հակառակը ձգտում է մասնավորի զարգացման հետ մեկտեղ նշանակալի դարձնել պետության դերը երկրի էկոնոմիկայում:

Չինաստանի ներդրումային քաղաքականությունում տեղի են ունեցել զգալի փոփոխություններ: Մինչև բարեփոխումները ձեռնարկատիրություններից ստացվող ամբողջ շահույթը ուղղվում էր դեպի պետական բյուջե, իսկ արդեն հետագայում պետական բյուջեից միջոցները բաշխվում էին ըստ ոլորտների, ձեռնարկությունների և մարզերի: Այժմ մինչև պետական բյուջե մտնելը ստացված հասույթները կարող են բաշխվել տարբեր ոլորտներում:

Դիտարկենք այս երկրի իշխանությունների կողմից իրականացվող հետևյալ բնութագրերը՝ օտարերկրյա ներդրումները խթանելու համար.

1. Պետության տնտեսական քաղաքականության և քաղաքական կայունության, կանխատեսելիության ապահովում:
2. Օտարերկրյա ներդրողների մուտքը երկրի տարածք, ազգային տնտեսության նոր ոլորտներ:
3. Օտարերկրյա ներդրումների օգտագործման ձևերի բազմազանություն:
4. Օտարերկրյա ներդրումների ներգրավման գործընթացներին պետական աջակցության ձևերի առաջնահերթությունների փոփոխություն: Սկսած քսաներորդ դարի 80-ականների կեսերից, պետությունն օգտագործում է արտոնյալ պայմաններ օտարերկրյա ներդրողների համար, որոնք ներառում էին հարկային խթաններ և հատուկ արտոնություններ, խթանելու ներդրումների աճի ծավալը և դինամիկան:
5. Պետական և օտարերկրյա մասնակիցների համար բարձր հետաքրքրություն ներկայացնող շրջաններում օտարերկրյա ներդրումների կենտրոնացումը: Այսպիսով, 1980-ական թվականներին մի շարք աշխարհագրական բարենպաստ ափամերձ տարածքներ հատկացվեցին տնտեսական գոտիներին (Շենժեն, սուհայ, Շանթու Գուանգդոնգում, Xiamen- ը Ֆուջանում և, հետագայում ՝ Հայնան):
6. Պետական լիազորությունների ապակենտրոնացում՝ աջակցելու օտարերկրյա ներդրումների ներգրավման գործընթացներին: Ապահովելով գոտու իշխանությունների տնտեսական անկախությունը տնտեսական խնդիրների լուծման գործում՝ կառավարման ճկուն համակարգը կարևոր շարժիչ ուժ է եղել դրանց զարգացման համար: Այսպիսով, տնտեսական գոտիների վարչական կառավարումն իրականացնում է Չինաստանի Ժողովրդական Հանրապետության Պետական խորհրդի գրասենյակը: Այն վերահսկում է քաղաքականության իրականացումը և համակարգում է գերատեսչությունների աշխատանքը գոտիների վերաբերյալ:
7. Կառավարության գործունեության արդյունքների մոնիտորինգ՝ օտարերկրյա ներդրումների ներգրավման գործընթացները խթանելու և դրա բովանդակության անհրաժեշտ ուղղման համար:

**Հարավային Կորեայի օրինակը**

Կորեայի Հանրապետության ներդրումային քաղաքականությունը տնտեսական բարեփոխումների սկզբնական շրջանում ուղղված էր համատեղ ձեռնարկությունների առաջնահերթ զարգացմանը: Երբ դրված խնդիրը լուծվեց, երկիրը սկսեց իրականացնել արտահանմանն ուղղված զարգացման ռազմավարություն (սկսած 1980-ականներից), որը ներառում էր հիմնականում պատրաստի ապրանքների արտահանում: «Սեուլի հրաշքի» ստեղծումը հնարավոր եղավ շնորհիվ օտարերկրյա ուղղակի ներդրումների լայն ներգրավման՝ օտարերկրյա գործընկերների վարկային ներդրումների զգալի սահմանափակմամբ: Ինչ վերաբերում է պետական աջակցության խնդիրներին, տարբեր նպաստների և խրախուսական միջոցառումների ապահովմանը, ապա այստեղ ֆինանսական աջակցության տրամադրումը խիստ սահմանափակ է: Բավականին շատ են այն բնագավառները որտեղ արգելվում կամ սահմանափակվում են օտարերկրյա ներդրումները[11]:

**Մեքսիկայի օրինակը**

Օտարերկրյա ներդրումների հաջող օգտագործման օրինակ է Մեքսիկան: Սկզբնապես օտարերկրյա ուղղակի ներդրումները այս երկիր կատարվում էին ցածր ծախսերով ապրանքներ և ծառայություններ արտադրելու ունակության պատճառով (հիմնականում աշխատուժի ցածր գնի պատճառով), որն այնուհետև կարող էր հեշտությամբ վաճառվել ամերիկյան շուկայում: Մեքսիկա-ամերիկյան սահմանի երկայնքով տարածքը արագորեն վերածվեց արտահանման բազայի: ԱՄՆ հիմնականում ներկրվում էր թեթև արդյունաբերության արտադրանքներ, ինչպես նաև ավտոմոբիլային և էլեկտրոնային բաղադրիչներ:

Մեքսիկայի իշխանությունները իրենց հերթին կարողացան ճշգրիտ օգտագործել իրենց ձեռնտու աշխարհագրական դիրքը և ստեղծեցին լրացուցիչ մրցակցային առավելություններ այն ոլորտների ներդրումների համար, որոնց զարգացումը երկրի շահերից էր բխում (թեթև մեքենայաշինություն, սպառողական ապրանքներ, քիմիա և

[11] https://sci-lib.biz/investitsii/osobennosti-formyi-privlecheniya-inostrannyih-75100.html

դեղագործություն և այլն)։ Եվ եթե սկզբում ՕՈՒՆ-ի ներհոսքը կենտրոնացած էր հիմնականում Միացյալ Նահանգներին սահմանակից շրջաններում, ապա այսօր ՕՈՒՆ բաշխված է ամբողջ երկրով։ Միևնույն ժամանակ, կարևոր խթաններից մեկը եղել է արտահանման պահանջների պարզեցումը և հավասար մրցակցային պայմանների սահմանումը։

**Ճապոնիայի փորձը**

Ճապոնիայի ներդրումային քաղաքականությունը հիմնականում կենտրոնացած է կապիտալի արտահանման վրա։ Նա չի իրականացնում «բաց դռների» քաղաքականություն ինչպես կապիտալի հավաքման, այնպես էլ ապրանքների ներմուծման առումով։ Չնայած արտաքին կապիտալի ներգրավումը արգելված չէ, այնուամենայնիվ, օտարերկրյա ներդրումները ներգրավված չեն երկրի տնտեսության առաջատար ոլորտներում՝ գյուղատնտեսության, նավթի և գազի արդյունաբերության մեջ։

Օտարերկրյա կապիտալի մուտքը բարձր տեխնոլոգիական և բարձր տեխնոլոգիաների ոլորտներում իրականացվում է խիստ սահմանափակ ռեժիմով։ Այսպիսով, մեքենաշինության և ռադիոէլեկտրոնային արտադրության մեջ արտասահմանյան գործընկերներին թույլատրվում է հիմնականում հավաքման, տեղական ձեռնարկություններում արտադրված բաղադրիչների և մասերի արտադրությամբ զբաղվել։ Այս կերպով Ճապոնիան պաշտպանում է տեղական արտադրողներին արտասահմանյան մրցակիցներից։[12]

**Հարավարևելյան Ասիայի երկրները**

Հարավարևելյան Ասիայի մի շարք երկրների (Մալայզիա, Թաիլանդ, Սինգապուր, Հոնկոնգ, Ինդոնեզիա և այլն) ներդրումային քաղաքականությունն իրականացվում է տնտեսության ֆինանսավորման ներքին և արտաքին աղբյուրների հաշվին։ Միևնույն ժամանակ խրախուսվում է համատեղ ձեռնարկությունների ստեղծումը արտահանման

[12] https://unctad.org/en/PublicationsLibrary/wir2017_overview_ru.pdf

ոլորտներում: Այս երկրներում իրականացվում է զարգացած արտասահմանյան տեխնոլոգիաների ներդրումը խթանելու քաղաքականություն, ինչպես նաև բոլոր տեսակի տնտեսվարող սուբյեկտների համար ստեղծվում է բարենպաստ հարկային ռեժիմ: Միևնույն ժամանակ, տեխնոլոգիական անվտանգությունը պահպանելու համար այս երկրների մասնավորեցման ծրագրերը նախատեսում են որոշակի սահմանափակումներ օտարերկրյա ներդրողների համար: Օրինակ ՝ Մալայզիայում արտահանմանն ուղղված արդյունաբերություններում մասնավոր ձեռնարկություններում օտարերկրացիների մասնաբաժինը չպետք է գերազանցի 25% -ը: Այս երկրներում արտաքին կապիտալի լայն ներգրավման համար առավել բարենպաստ պայմաններ ստեղծվեցին առևտրի առավելագույն ազատականացման միջոցով:

Սինգապուրի կառավարությունը օգտագործում է հարկային խթանների և սուբսիդիաների համադրություն ՝ լայնորեն ներգրավելու օտարերկրյա ներդրումները: Հիմնական առավելությունները ներառում են՝ եկամտահարկից ազատելը մինչև 10 տարի փոքր ձեռնարկություններին, ինչպես նաև այն ձեռնարկություններին, որոնք օգտագործում են բարդ տեխնոլոգիաներ, բարձր որակավորում ունեցող աշխատուժ կամ որոշակի ծառայություններ են մատուցում, մասնավորապես՝ առաջադեմ տեխնոլոգիաների իրականացում, վենչուրային կապիտալի ձևավորում, ֆինանսական խորհրդատվություն[13]:

[13] http://be5.biz/ekonomika1/r2013/2837.htm

## 2.2 Ներդրումային և գործարար միջավայրի առկա վիճակը ՀՀ-ում

2000-ական թվականներին գրանցված կայուն աճը խթանեց որոշակի տնտեսական աճի սակայն մինչ այժմ աղքատության և գործազրկության մակարդակը մնում է բարձր: 2001–2007 թվականների ընթացքում տնտեսությունն աճում էր միջինից 12,5 տոկոս տարեկան: Դա նպաստում էր տրանսֆերների մեծ ներհոսքին և օտարերկրյա ուղղակի ներդրումներին: Մի շարք արտաքին ցնցումների պատճառով տնտեսությունը անկում է ապրել վերջին տասնամյակի ընթացքում, երբ Հայաստանը տուժեց համաշխարհային տնտեսական և ֆինանսական ճգնաժամից: Սակայն սկսած 2017 թվականից Հայաստանի տնտեսությունը վերադարձավ աճի տեմպերին: 2017 թվականին համախառն ներքին արդյունքը ընդլայնվեց մինչև 7,5%, իսկ 2018 թվականին՝ 5.2%: Համախառն ներքին արդյունքի աճը 2019թ.-ի առաջին կիսամյակում 2018թ. նույն ժամանակահատվածի համեմատ կազմել է 6.8%:

Տնտեսական աճը դրական ազդեցություն ունեցավ նոր աշխատատեղեր բացելու համար: Այնուամենայնիվ, գործազրկությունը շարունակում է մնալ բարձր (2018 թվականի 4-րդ եռամսյակում 16.9 տոկոս): Ըստ ՀՀ վիճակագրական կոմիտեի բնակչության 25,7 տոկոսը դեռ գտնվում է աղքատության մեջ: Նաև աշխարհագրական անհավասարությունները շարունակում են մնալ արտահայտիչ, ընդ որում, բարձրադիր շրջանները հաճախ ավելի աղքատ են:

2000-ական թվականներին Հայաստանը ներգրավեց ՀՆԱ-ի աճող հոսքերը էներգիայի, հանքարդյունաբերության, ՏՀՏ, բանկային և անշարժ գույքի ոլորտներում: Այս ոլորտներում առավելապես շատ եղան ներդրումները, որոնց գերակշիռ մասը կատարվում էր սփյուռքի կողմից: Հայաստան կատարված մուտքերի գագաթնակետը եղավ 2008 թ.-ին և կազմեց 944 միլիոն դոլար:

Գծապատկեր 1-ում ներկայացված են Հայաստան կատարված ներդրումները 2003-2018 թվականներին: Թվերը ներկայացված են ԱՄՆ դոլար-ի տեսքով:

Գծապատկեր 1[14]




*Հայաստան կատարված ներդրումները 2003-2018 թվականին:*

ՀՆԱ-ի ներհոսքերը ավելի բազմազան են դարձել, բայց շարունակում են ապավինել սփյուռքին, ինչպես ցույց է տրված գծապատկեր 1-ում: Ռուսաստանի Դաշնությունը շարունակում է մնալ օտարերկրյա ներդրումների ամենամեծ աղբյուրը՝ կազմելով ավելի քան 40 տոկոսը: Ռուսական ներդրումները կենտրոնացված են էներգետիկայի, հանքարդյունաբերության, տրանսպորտի, բանկային, առևտրի և հեռահաղորդակցության ոլորտներում:

Այնուամենայնիվ, 2018 թվականից Ռուսաստանից եկող ներդրումները կրճատվել են, ինչը պայմանավորված է կապիտալի զգալի դուրսբերումից այնպիսի ոլորտներից, ինչպիսիք են անշարժ գույքը և հանքարդյունաբերությունը:

ԵՄ երկրները միասին կազմում են կատարվող ներդրումների ընդհանուր 20 տոկոսը: Եվրո Միության ներդրումների ամենամեծ բաժինը գալիս է Ֆրանսիայից (խմիչքներ, ջրամատակարարում և կոյուղու կառավարում) և Գերմանիայից (հանքարդյունաբերություն և մետաղների արտադրություն):

[14] https://unctad.org/en/PublicationsLibrary/diaepcb2019d3_en.pdf?fbclid=IwAR02g8kvg7512YsGkSd54dFn-2DPjhoysevw6-DoIh5R2MBAZ0EoYHunBX0

Այլ ներդրող երկրներ են Արգենտինան (օդանավակայաններ և գինի), Միացյալ Նահանգներ (ՏՏ և էլեկտրոէներգիա) և Լիբանան (հեռահաղորդակցություն, սնունդ):

Գծապատկեր 2-ում պատկերված են Հայաստան ներդրում կատարող երկրները ըստ իրենց կատարած ներդրումների մեծության: Չնայած նրան, որ Ռուսաստանից կատարվող ներդրումների քանակը խիստ պակասել է, այն մնում է թվով առաջինը:

Գծապատկեր 2[15]




*Երկրները ըստ կատարված ներդրումների*

Ներդրումների մեծ զանգվածը կատարվում է հատկապես նոր զարգացող ոլորտներում: 2014-2018 թվականների տվյալները ցույց են տալիս, որ ներդրումներ մեծ չափով կատարվում են հանքարդյունաբերության ոլորտ՝ առաջ անցնելով էներգիայի ոլորտին: Վերջինս երկար տարիներ զբաղեցնում էր առաջատար տեղ ներդրումների գրավման առումով: Հանքարդյունաբերության ոլորտին հաջորդում է զբոսաշրջությունը (ներկայումս ներհոսքերի մեծությամբ երկրորդ ստացողը), անշարժ գույքի ոլորտը և ալկոհոլային խմիչքների արտադրության ոլորտը: Չնայած փոքր ծավալներին

[15] https://unctad.org/en/PublicationsLibrary/diaepcb2019d3_en.pdf?fbclid=IwAR02g8kvg7512YsGkSd54dFn-2DPjhoysevw6-DoIh5R2MBAZ0EoYHunBX0

արտահանման զարգացող ոլորտներից են գյուղատնտեսությունը, տեղեկատվական տեխնոլոգիաները և դեղագործությունը:

Ներդրումների հարցում կարևոր է նաև մասնավոր հատվածը: Հայաստանի վերաբերյալ անցկացրած հարցումների արդյունքում ձեռնարկատերերը ամենից մեծ խնդիրը նշում էին ոլորտի կոռումպացված լինելը: Այդ հանգամանքը խիստ բացասաբար էր ազդում կայուն բիզնես վարելու գործում: Հարցումների արդյունքում հատկապես նշվում էր հարկային տեսչությունների աշխատանքների քաղաքականացված լինելը, դատական համակարգում անարդարությունը և անպատիժ հակամրցակցային պրակտիկան: Ներկայումս, հարցումների արդյունքում նշվում են կատարված քայլերը և բարեփոխումները՝ խնդիրները վերացնելու նպատակով: Կառավարությունը մի շարք քայլեր է ձեռնարկել կոռուպցիայի դեմ պայքարի և անհիմն մենաշնորհների համար: Մի շարք բարեփոխումներ են իրականացվել հարկային և մաքսային մարմիններում: Իհարկե դեռ ժամանակ է պետք վերջնական արդյունքի հասնելու և բարեփոխումների արդյունքը տեսնելու համար:

Ինչ վերաբերում է աղքատության ցուցանիշին, վերջերս Կառավարությունը հայտարարեց տնտեսական հեղափոխություն՝ աղքատության և գործազրկության դեմ պայքարի համար:

2019 թվականին վարչապետը խորհրդարանին է ներկայացրել բարեփոխումների 5 ամյա պլանը և այդպիսով հայտարարել է տնտեսական հեղափոխության սկիզբը: Այս բարեփոխումների գերնպատակը աղքատության և գործազրկության զգալի կրճատումն է մինչը 2023 թվականը: Այս ծրագրում ուշադրություն է դարձված նաև երկրի ներդրումային միջավայրին: Ծրագրում նշվում է ներդրումային միջավայրի բարելավման, ներդրումների գրավման անհրաժեշտությունը: Այն նպատակ ունի հասնել «տնտեսության կառուցվածքային վերափոխմանը, որում բարձր տեխնոլոգիաների արդյունաբերությունը դառնում է լոկոմոտիվը և ապրանքների և ծառայությունների արտահանումը դառնում է հիմնական շարժիչը»:

Ծրագրում նաև նշվում է, որ առանձնահատուկ ուշադրություն պետք է դարձվի հիմնական ոլորտների զարգացմանը, որոնք են՝ բարձր տեխնոլոգիաները, զբոսաշրջությունը, վերամշակող արդյունաբերությունը և հանքարդյունաբերությունը:

Իշխանությունները հայցել են ՄԱԿ-ի առևտրի և զարգացման համաժողովում Ներդրումային քաղաքականության վերանայման (IPR) հայեցակարգը կենտրոնացնել Հայաստանին օժանդակելու վրա: Ներկայացնել կոնկրետ առաջարկություններ ներդրումային միջավայրի բարելավման համար, ինչպես նաև աջակցել կառավարության սահմանած զարգացման նպատակներին՝ որպես բարեփոխումների օրակարգ:

**Գործարար միջավայրի բարելավման 2019-2024 ռազմավարությունը**

ՀՀ կառավարության կողմից ընդունվել է գործարար միջավայրի բարելավման ռազմավարությունը, որի նպատակը գործարարների շահերի ներկայացումն և պաշտպանության համակարգի կատարելագործումն է, մատուցվող ծառայությունների որակի բարձրացումն է, վարչարարական ընթացակարգերի ավելի թափանցիկ և պարզ դարձնելն է: Ռազմավարության գերնպատակը ՀՀ տարածքում բիզնեսի աճի և բիզնեսի վարման օժանդակումն է:

Գործարար միջավակրի բարելավմանն ուղղված ռազմավարությունը մշակվել է 5 տարով, որտեղ նշված են առաջիկա 5 տարում իրագործվելիք ծրագրերը, նպատակները և ակնկալվող արդյունքների հասնելու հիմնական գործողությունները: Նախատեսվող միջոցառումների արդյունքում նախատեսված է լինել գործարար և ներդրումային միջավայրի գրավչությամբ աշխարհի առաջին 15 երկրների շարքում: Այս ամենի իրականացումը առաջադրված է ՀՀ էկոնոմիկայի նախարարությանը:

Ակնկալվող փոփոխությունները ավելի ստույգ տեսնելու և ճշգրիտ համեմատականներ տանելու համար որոշվել է տնտեսական քաղաքականության որակի և գործարար միջավայրի բարելավմանն ուղղված աշխատանքների ցուցանիշները ներկայացնել միջազգայնորեն ընդունված ինդեքսների միջոցով: Երկրի մակարդակով ցուցանիշը ստանալու համար կարևոր է ուշադրություն դարձնել միջազգային ցուցանիշներին:

Աղյուսակ 4-ում ներկայացված են հետևյալ մի քանի միջազգային վարկանիշների ցուցանիշները:

Աղյուսակ 4[16] *Հայաստանի ցուցանիշները միջազգային վարկանշային գնահատման համակարգերում*

| Անվանում | Երկիր | Գնահատական |
|---|---|---|
| Fitch Ratings | Միացյալ Նահանգներ | B+ Positive |
| Moody's | Միացյալ Նահանգներ | Ba3 Positive Outlook |
| WEF<br>Գլոբալ մրցունակության ինդեքս | Շվեյցարիա | 70-րդ տեղ 140 երկրների շարքում |
| Տնտեսական ազատության ինդեքս (The Heritage Foundation) | Միացյալ Նահանգներ | 47-րդ տեղ 180 երկրների շարքում |
| ՀԲ<br>«Գործարարությամբ զբաղվելը» զեկույց | Միացյալ Նահանգներ | 41-րդ տեղ 190 երկրների շարքում |

Աղյուսակ 4-ում ներկայացված գնահատման համակարգերից պետք է առանձնացնել **«Գործարարությամբ զբաղվելը»** զեկույցը, քանի որ վերջինիս մեթոդաբանությունը ամբողջովին հիմնված է գործարար միջավայրի բարելավման ռազմավարության շրջանակում ընդգրկված ուղղությունների վրա: Ներկայացված մյուս գնահատման համակարգերը ոչ օբյեկտիվ կերպով են իրականացնում չափման գործընթացները: Ըստ **«Գործարարությամբ զբաղվելը»** զեկույցի հնարավոր է կանխատեսել որոշակի բարելավումներից հետո Հայաստանի զբաղեցրած դիրքը միջազգային գնահատման սանդղակներում: Համաձայն այս զեկույցի Հայաստանում բարեփոխումներ պետք է իրականցվեն հատկապես հարկային, մաքսային, դատական, առևտրի ոլորտներում, ինչը միանշանակ կապահովի ցուցանիշի բարձրացումը միջազգային գնահատման համակարգերում: Ստորև կարելի է տեսնել ակնկալվող արդյունքները զեկույցի համաձայն բարեփոխումների իրականացման արդյունքում:

[16] https://unctad.org/en/PublicationsLibrary/diaepcb2019d3_en.pdf?fbclid=IwAR02g8kvg7512YsGkSd54dFn-2DPjhoysevw6-DoIh5R2MBAZ0EoYHunBX0

Աղյուսակ 5-ում ներկայացված է Հայաստանի դիրքը «Գործարարությամբ զբաղվելը» 2019 զեկույցի բարեփոխումների արդյունքում, որտեղ ներկայացված է կանխատեսվող արդյունքը՝ իրականացվելիք միջոցառումների դեպքում:

Աղյուսակ 5[17] *Հայաստանի դիրքի կանխատեսվող արդյունքը՝ իրականացվելիք միջոցառումների արդյունքում:*

| ՆՊԱՏԱԿ | ՆԵՐԿԱՅԻՍ ՄԻԱՎՈՐԸ | ՆԵՐԿԱՅԻՍ ԴԻՐՔԸ | ԹԻՐԱԽԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ | ԹԻՐԱԽԱՅԻՆ ԴԻՐՔԸ |
|---|---|---|---|---|
| Ընկերությունների հիմնում | 96.21 | 8 | 96.21 | ԱՌՆՎԱԶՆ 15-ՐԴ |
| Շինարարական թույլտվություններ | 68.06 | 98 | 80.83 | ԱՌՆՎԱԶՆ 15-ՐԴ |
| Էլեկտրաէներգիայի մատակարարման ցանցին միացում | 90.79 | 17 | 91.33 | ԱՌՆՎԱԶՆ 15-ՐԴ |
| Սեփականության գրանցում | 86.97 | 14 | 92.45 | ԱՌՆՎԱԶՆ 15-ՐԴ |
| Վարկերի ստացում | 70.00 | 44 | 90.00 | ԱՌՆՎԱԶՆ 15-ՐԴ |
| Փոքր բաժնետերերի պաշտպանություն | 63.33 | 51 | 83.33 | ԱՌՆՎԱԶՆ 15-ՐԴ |
| Հարկերի վճարում | 74.46 | 82 | 86.16 | ԱՌՆՎԱԶՆ 25-ՐԴ |
| Արտաքին առևտուր | 89.22 | 46 | 89.22 | ԱՌՆՎԱԶՆ 25-ՐԴ |
| Պայմանագրերի կիրարկում | 70.63 | 24 | 74.34 | ԱՌՆՎԱԶՆ 15-ՐԴ |
| Սնանկության ճանաչում | 43.99 | 95 | 59.61 | ԱՌՆՎԱԶՆ 55-ՐԴ |
| **Ընդհանուր միավոր** | **75.37** | **41-ՐԴ** | **84.35** | ԱՌՆՎԱԶՆ 15-ՐԴ |

Զեկույցի համաձայն նպատակներին հասնելու համար պահանջվում է 5 տարի, սակայն այդ ընթացքում հարկավոր է կատարել հետազոտություններ:

Համաձայն այս զեկույցի նպատակներին հասնելու պարագայում՝

1. Ընդհանուր միավորներով Հայաստանը կընդգրկվի լավագույն 15 երկրների շարքում:
2. Առանձին ենթացուցիչների դեպքում Հայաստանը կլինի 10-ից 7-ում:

[17] https://unctad.org/en/PublicationsLibrary/diaepcb2019d3_en.pdf?fbclid=IwAR02g8kvg7512YsGkSd54dFn-2DPjhoysevw6-DoIh5R2MBAZ0EoYHunBX0

Միևնույն ժամանակ կանխատեսվում է, որ Հայաստանը վստահաբար չի ներառվի 15 երկրների շարքում հետևյալ անվանակարգերում՝

1. Հարկերի վճարում
2. Արտաքին առևտուր
3. Սնանկության ճանաչում:

Համաձայն «Գործարարությամբ զբաղվելը» զեկույցի, առաջադրված նպատակներին հասնելու համար առաջնահերթ ուշադրություն և աշխատանք պետք է տարվի հետևյալ ուղղություններով՝

1. Ընկերությունների հիմնում,
2. Շինարարական թույլտվությունների ստացում,
3. Միացում հանրային ծառայությունների մատակարարման ցանցերին,
4. Սեփականության գրանցում,
5. Վարկերի ստացում,
6. Փոքր բաժնետերերի պաշտպանություն,
7. Հարկերի վճարում,
8. Արտաքին առևտուր,
9. Պայմանագրերի կիրարկում,
10. Սնանկության ճանաչում,
11. Աշխատանքային օրենսդրություն,
12. Տնտեսական մրցակցության պաշտպանություն,
13. Կորպորատիվ կառավարում,
14. Ինտեգրված տվյալների համակարգ,

Բոլոր այս ուղղությունների համար նախատեսված բարեփոխումները իրականացնելու համար պետք է առաջնահերթ.

1. Կանոնները պարզեցնել,
2. Կրճատել ընթացակարգերը, ընթացակարգերի վրա ծախսվող ժամանակը և գործողությունները,

3. Կիրառել նորագույն տեխնոլոգիաներ՝ պրոցեսը արագ և մատչելի դարձնելու համար:[18]

**Գործարար միջավայրի բարելավմանն ուղղված միջոցառումները**

«Գործարարությամբ զբաղվելը» զեկույցում Հայաստանի դիրքը բարելավելու ուղղությամբ բարեփոխումներ իրականացնելու նպատակով ՀՀ կառավարության կողմից ընդունվել է գործարար միջավայրի բարելավման միջոցառումների 7 ծրագիր: Այդ 7 ծրագրերի համաձայն բարեփոխումներ իրականացվել են հետևյալ ոլորտներում՝

1. Հարկային ոլորտ,
2. Մաքսային ոլորտ,
3. Քաղաքաշինության ոլորտ,
4. Սեփականության գրանցման ոլորտ,
5. Ներդրողների պաշտպանվածության ոլորտ,
6. Ընկերությունների գրանցման ոլորտ,
7. Սնանկության ճանաչման ոլորտ,
8. Պայմանագրերի կիրարկման ոլորտ,
9. Վարկերի ստացման ոլորտ,
10. Էլեկտրականության միացման ոլորտ,

Կատարված բարեփոխումների արդյունքում մի շարք փոփոխություններ են եղել: Մեծ մասը վերաբերում են հարկային և մաքսային ոլորտներին:

1. Այս ոլորտներում ներդրվել է պարզաբանումների տրամադրման հստակ ընթացակարգ, սահմանվել են հստակ ժամկետներ և կանոններ:
2. Կարևոր քայլերից մեկը վճարումների պետական էլեկտրոնային համակարգի ստեղծումն էր (e-payments.am): Այս համակարգի շնորհիվ էլեկտրոնային տարբերակով հնարավորություն է տրվում կատարել վճարում պետական տուրքի, տեղական տուրքի, պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների

[18] https://unctad.org/en/PublicationsLibrary/diaepcb2019d3_en.pdf?fbclid=IwAR02g8kvg7512YsGkSd54dFn-2DPjhoysevw6-DoIh5R2MBAZ0EoYHunBX0

կողմից մատուցվող ծառայությունների համար կամ վճարել վարչական տուգանքները:

3. Երևանի քաղաքապետարանի կողմից գործարկվեց գույքի և հողի հարկերի վճարման առցանց համակարգը՝ Yerevan.am կայքի միջոցով:
4. Եթե նախկինում ընկերությունները կատարում էին 50 հարկային վճարում, ապա այդ թիվը այժմ կրճատվել է մինչև 10-ը:
5. Մաքսային հսկողության համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը զգալի կրճատվել է:
6. Թղթային փաստաթղթերի պատրաստման ժամանակի կրճատման նպատակով ներդրվել է հաշվարկային փաստաթղթեր ենթահամակարգը:

Բիզնես հիմնելու համար նույնպես մի շարք բարեփոխումներ են իրականացվել, որոնց հետևանքով՝

1. Ավելի հեշտացել է իրավաբանական անձ կամ ձեռնարկատեր գրանցվելու գործընթացը: Այժմ այդ գործընթացը տեղի է ունենում պետական ռեգիստրում և ավելի կարճ ժամանակահատված է խլում: Եթե նախկինում ընկերությունը գրանցելու համար հարկավոր էր այցելել 6 մարմին, ապա այժմ բոլոր գործառույթները իրականացվում են մեկ կառույցում:
2. Ստեղծվել և գործածվել է www.e-register.am կայքը, որը հնարավորություն է տալիս օնլայն գրանցել իրավաբանական անձանց պետական ռեգիստրի համակարգում: Այս համակարգի շնորհիվ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների գրանցման պրոցեսն տևում է 15 րոպե, փակ բաժնետիրական ընկերությունների գրանցումը 20, իսկ անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառումը 10 րոպեի ընթացքում է իրականացվում: Բացի հեշտացրած գրանցման պրոցես ապահովելուն կայքի շնորհիվ հանարավոր է ավելի ինտերակտիվ հետևել դիմումների ստացման պրոցեսին և ունենալ ամբողջ տեղեկությունը կազմակերպությունների վերաբերյալ:
3. Քաղաքաշինությանն առնչվող ստուգումների համար սահմանվել են հստակ ժամկետներ:

4. Ստեղծվել է շինարարական թույլտվությունների տրամադրման էլեկտրոնային համակարգը www.e-permits.am
5. Ստեղծվել է «Դատալեքս» հանրային տեղեկատվական համակարգը: Այն հնարավորություն է տալիս որոնել գործերը արագ և հեշտ ըստ տարբեր գործոնների՝ դատական գործի տիպ, համար, դատարանի անուն,հոդված ամսաթիվ և այլն: Բացի գործի որոնումից այս համակարգը հնարավորություն է տալիս հետևել գործի ընթացքին և ստանալ տեղեկատվություն դատարանի կայացրած վճռի վերաբերյալ:

Բարեփոխումներ իրականացվել են նաև վարկերի ստացման բնագավառում: Այսպես օրինակ՝

1. Ստեղծվել է էլեկտրոնային հարթակ, որը հնարավորություն է տալիս www.e-credit.am կայքի միջոցով, օնլայն ստանալ բիզնես, սպառողական և հիփոթեքային վարկեր
2. ՀՀ բոլոր առևտրային բանկերի կողմից ընդհանուր նկարագրով գրավների տրամադրում:
3. Պարտապանի գույքի օտարման կապակցությամբ կատարվող գործողությունների ավելի կարճ ժամկետների սահմանում:[19]

[19] http://www.innovcentre.am/hy/bussiness/30318

# ԳԼՈՒԽ 3. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ԽԹԱՆՄԱՆ ՀԱՄԱՐ

## 3.1 Օտարերկրյա ներդրումների խթանման միջոցառումները Հայաստանի Հանրապետությունում

### Օտարերկրյա ուղղակի ներդրումների գրավումը

Իհարկե համաշխարհային ֆինանսական ճգնաժամը անհետևանք չեղավ նաև Հայաստանի տնտեսության համար: Հիմնական խոչընդոտներից մեկը նաև տարեցտարի ավելացող արտագաղթի խնդիրն է, որի պատճառով պակասում են մարդկային ռեսուրսները: Աշխատատեղիների սակավ լինելը ունի մի շարք պատճառներ, սակայն հիմնահարց է հավելյալ տեղերի ստեղծումը և մարդկանց զբաղվածության ապահովումը: Անկախությունից ի վեր մի շարք ներդրումային ծրագրեր են մշակվել, սակայն ցավոք քչերն են կյանքի կոչվել: Ինչպես ցանկացած երկրի համար Հայաստանի համար նույնպես շատ կարևոր է ռեսուրսների գրավումը և հատկապես ներդրումների տեսքով:

Հայաստանի կառավարության համար կարևոր տեղում են գտնվում ինչպես օտարերկրյա ուղղակի ներդրումները (ՕՈՒՆ), այնպես էլ միջպետական ձեռնարկությունների կողմից ներդրումները: Նրանք ապահովում են երկրի կայուն զարգացումը և նպատակների իրագործումը:

Օտարերկրյա ուղղակի ներդրումների վերաբերյալ Հայաստանի օրենսդրական դաշտը կարգավորվում է երկու փաստաթղթերով՝ Հայաստանի զարգացման 2014-2025թթ. ռազմավարությամբ և Հայաստանի Հանրապետության՝ արտահանմանն ուղղված արդյունաբերական քաղաքականությամբ:

*Հայաստանի Զարգացման Ռազմավարությունը (ՀԶՌ)*[20]

Հայաստանի զարգացման ռազմավարությունը (ՀԶՌ) նախկին 2008 թվականին եղած Կայուն զարգացման ծրագիրն է (ԿԶԾ): ՀԶՌ-ն ընդունվել է և գործում է 2014-2025 թթ.-ի համար: Այն ունի մի շարք խնդիրներ և նպատակներ՝

1. Նոր աշխատատեղիների ստեղծում,
2. Զարգացնել մարդկային կապիտալը և բարձրացնել այն նոր մակարդակի,
3. Կատարելագործել Հայաստանում գործող սոցիալական պաշտպանության համակարգը,
4. Բարելավել պետական կառավարման համակարգը:

Այս ամենի հետ մեկտեղ, Հայաստանի զարգացման ռազմավարության գերակա խնդիրներից է ներդրումային միջավայրի կատարելագործումը, ինչը կհանգեցնի ներդրումների աճին և հավելյալ աշխատատեղերի ստեղծմանը:

Ընդհանուր առմամբ ՀԶՌ-ում ներառված կետերը ուղղված են ներդրումային միջավայրի և բիզնեսի կատարելագործմանը:

ՀԶՌ- ի ծրագրի համաձայն պետք է իրականացվի՝

1. Պետության հետ ձեռնարկությունների, ինչպես նաև քաղաքացիների ուղղակի առնչության կրճատում: Սա պետք է իրականացվի գերատեսչությունների միջև ինֆորմացիայի փոխանցման էլեկտրոնային համակարգի օգտագործման միջոցով:
2. Բիզնեսներին և քաղաքացիներին առնչվող պետական կանոնակարգի միանվագ կրճատում և պարզեցում շուրջ 50%-ով:
3. Բարեփոխում տեսչական ստուգումների համակարգում:
4. Պետք է իրականացվեն կանոնակարգերի ազդեցության գնահատումներ:
5. Հայաստանում պետք է ուսումնասիրվեն օտարերկրյա բիզնես կանոնակարգերի և ներդրումային միջավայրի ստացված փորձերը: Ստացված արդյունքների հիման վրա պետք է մշակվեն ծրագրեր և կիրառվեն Հայաստանում:

[20] https://www.gov.am/files/docs/1322.pdf

ՀԶՌ-ով նաև ներկայացվում են ՏՏ ոլորտին վերաբերող մի շարք հարցեր: Դրանցից են՝

1. ՏՏ ենթակառուցվածքների, տեխնոպարկերի և ինկուբատորների ստեղծման աշխատանքները:
2. Համալսարանների համար անհրաժեշտ լաբորիատորիաներ ձեռք բերելը:
3. ՏՏ ոլորտում արտահանման համար խթան հանդիսացող նպաստավոր հարկային քաղաքականության իրականացումը.
4. Ուղղակի աջակցություն նորարական արտադրանք կամ ծառայություններ առաջարկող ՏՏ ընկերություններին:

*Հայաստանի Հանրապետության՝ արտահանմանն ուղղված արդյունաբերական քաղաքականությունը*[21]

Արտահանմանն ուղղված արդյունաբերական ռազմավարությունը ընդունվել է 2011 թվականին: Այն նպատակաուղղված է երկրի առաջատար ոլորտների ձևավորմանը և արտահանման ներուժ ունեցող ոլորտների զարգացմանը:

Նպատակ է դրված՝

1. Մինչև 2020 թվականը տնտեսության արտահանելի հատվածն ընդլայնել մինչև 19%:
2. Մինչև 2020թվականը դիվերսիֆիկացնել տնտեսության արտահանելի հատվածը 1,300-1,500 ԱՄՆ դոլարով:
3. Բարձրացնել հայկական արտադրանքի մրցունակությունը:

Ապահովելով բարենպաստ առևտրային ռեժիմը, առանց առևտրային խոչընդոտների հնարավոր է այս նպատակների իրականացումը: Իհարկե կարևորագույն տեղ են զբաղեցնում օտարերկրյա ներդրումների գրավումը: ՕՈՒՆ կարևորագույն աղբյուր է և՛ որպես ֆինանսական ռեսուրսների և՛ նոր տեխնոլոգիաների ներգրավման համար:

[21] http://www.irtek.am/views/act.aspx?aid=65893

Օտարերկրյա ուղղակի ներդրումները երկրի տնտեսական աճը ապահովող գլխավոր գրավականն են: ՕՈՒՆ-ի զարգացման շնորհիվ լուծվում է առաջնահերթ աշխատատեղերի խնդիրը, բարձրանում է աշխատուժի և տեղական կազմակերպությունների որակը: Ամբողջ աշխարհում օտարերկրյա կազմակերպությունների մասնաճյուղերը ստեղծում են ավելի քան 71 միլիոն աշխատատեղ: Բացի այդ տեղի արտադրանքը և ծառայությունները միջազգային շուկա հանելու մեծ հնարավորություններ է ունենում: Տեղի արտադրողը պահանջարկ է ունենում ոչ միայն երկրի ներսում, այլ նաև երկրից դուրս: Փորձը ցույց է տալիս, որ օտարերկրյա կազմակերպությունների մեծ շահույթը ստացվում է տարբեր երկրներում գտնվող իրենց մասնաճյուղերից:

Կարևոր է նաև ուսումնասիրել երկրի սոցիալ-տնտեսական վիճակը ճիշտ տեսակի ներդրումներ գրավելու համար: Հարկավոր է ուշադրություն դարձնել և աշխատել ներդրումները ուղղել երկրում գործող այն ուղղությունների վրա, որոնք կարող են օգնել երկրի զարգացման հարցում: Յուրաքանչյուր ներդրման տեսակ գոյացնում է տարբեր աշխատատեղեր: Շատ կարևոր է մեծ ուշադրություն դարձնել այս փաստի վրա, քանի որ այդպես հնարավոր է երկրում այս կամ այն ոլորտը ավելի աշխատող և եկամտաբեր դարձնել: Բացի այդ մի շարք աշխատատեղիների համար լուրջ հմտությունների կարիք չի լինում, ինչը թույլ է տալիս ապահովել աշխատատեղիներով մեծ քանակի մարդկանց: Եթե հարցերից մեկը գործազրկության լուծելն է, ապա ճիշտ ոլորտում ներդրումների իրականացումը հնարավորություն կտա խնդրի լուծումը ստանալ:

Որպես օրինակ գյուղատնտեսության ոլորտում ներդրումները հիմնականում միտված են ոչ լուրջ հմտություններ, կենցաղային աշխատանքներ կատարելուն: Այնինչ երկրի արդյունավետության բարձրացման համար կատարվող ներդրումները ուղղված են լինում դեպի SS ոլորտ, որտեղ արդեն կատարվում են տեխնոլոգիապես բարդ աշխատանքներ և համապատասխանաբար պահանջվում են լուրջ հմտությունների տիրապետող մասնագետներ:

Գծապատկեր 3-ում ցույց են տրված ստեղծված աշխատատեղերը ըստ ոլորտների և պահանջվող հմտությունների մասնագետների հարաբերակցությունը:

Գծապատկեր 3[22]




*Ստեղծված աշխապտապտեղերը ըսպ ոլորպների և պահանջվող հմպությունների մասնագեպների հարաբերակցությունը:*

[22] https://mineconomy.am/media/7487/nerdrumayin_barepoxumneri_qartez.pdf

*Օտարերկրյա ուղղակի ներդրումների վիճակագրությունը 2019 թվականի հունվար-հունիս ամիսներին:*

2019 թվականի հունվար-հունիս ամիսներին Հայաստանի Հանրապետության տնտեսությունում օտաերկրյա ներդրումների զուտ հոսքերի ծավալը կազմել է **202 միլիոն ԱՄՆ դոլար:** Այս ցուցանիշը աճել է նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ 253 միլիոն ԱՄՆ դոլարով: Ներդրումները հիմնականում կատարվել են Ռուսաստանից, Գերմանիայից, Իտալիայից և Նիդերլանդներից:

Ներդրումները ըստ երկրների պատկերված են գծապատկեր 4- ում:

Գծապատկեր 4[23]




*Հայաստան կատարված ներդրումները ըստ երկրների*

[23] https://mineconomy.am/media/7487/nerdrumayin_barepoxumneri_qartez.pdf

Ներդրումների մեծ զանգվածը ուղղված է եղել դեպի էներգետիկա, հանքարդյունաբերություն, անշարժ գույքի հետ կապված գործունեություն և կացության կազմակերպում:

Ներդրումները ըստ տնտեսության ոլորտների պատկերված են գծապատկեր 5- ում:

Գծապատկեր 5[24]




*Հայաստան կատարված ներդրումները ըստ տնտեսության ոլորտների*

2019 թվականի առաջին կիսամյակում օտարերկրյա *ուղղակի* ներդրումների զուտ հոսքերի ծավալը կազմել է **16.1** միլիոն ԱՄՆ դոլար, ինչը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ նվազել է **64.1** մլն ԱՄՆ դոլարով:

Ինչ վերաբերում է նվազումներին, ապա ՕՈՒՆ հիմնական նվազումները եղել են հեռահաղորդակցության ոլորտում Լիբանանի կողմից: Այն կազմել է **23,6** միլիոն ԱՄՆ

[24] https://mineconomy.am/media/7487/nerdrumayin_barepoxumneri_qartez.pdf

դոլար)։ Նվազում եղել է նաև Ֆրանսիայի կողմից՝ խմիչքների արտադրության ոլորտում, **11,4** միլիոն ԱՄՆ դոլար արժեքով։ Ամենաշատ նվազումները եղել են հանքագործական արդյունաբերության հարակից գործունեության ոլորտում՝ Ջերսիի կողմից։ Լիդիան ընկերությունը 2019 թվականին ներդրում ընդհանրապես չի ունեցել, այն ինչ 2018 թվականին կատարվել էր 42,9 միլիոն դոլարի ներդրում։

2019 թվականի հունիսի վերջի դրությամբ ՀՀ տնտեսության իրական հատվածում կատարված օտարերկրյա ներդրումների համախառն հոսքերը կազմել են 19.2 մլրդ ԱՄՆ դոլար, որից ուղղակի ներդրում է եղել 8.9 մլրդ ԱՄՆ դոլարը։

Ըստ համախառն հոսքերի՝ առաջինը Ռուսաստանն է (7.0 մլրդ ԱՄՆ դոլար), որին հաջորդում են Գերմանիան (2.6 մլրդ ԱՄՆ դոլար), Կիպրոսը (1.3 մլրդ ԱՄՆ դոլար) և Ֆրանսիան (1.1 մլրդ ԱՄՆ դոլար)։ Համախառն հոսքերն ընդգրկում են 1988թ. մինչև 2019թ. հունիսի վերջն ընկած ժամանակահատվածում միայն գործառնության արդյունքում իրականացված ներդրումների ծավալների հանրագումարը (առանց պարտավորությունների գծով մարումների, գների, փոխարժեքի և այլ փոփոխությունների՝ արտակարգ իրավիճակների, մեխանիկական սխալի և կազմակերպության ուղղակի լուծարման արդյունքում իրականացված փոփոխությունների)։

Ընդհանուր ներդրումները ներառում են ուղղակի, պորտֆելային և այլ ներդրումները (վերջինում ներառվում են վարկերը և փոխառությունները, ապրանքների և ծառայությունների դիմաց վճարվելիք/ստացվելիք գումարները, ստացված/տրված կանխավճարները)։

Զուտ հոսքերը հաշվետու ժամանակաշրջանում օտարերկրյա ներդրումների գծով ստացումների և մարումների տարբերություններն են։

Ստորև, աղյուսակ 6-ում, ներկայացված են 2018 և 2019 թվականների հունվար-հունիս ամիսներին կատարված ընդհանուր ներդրումները և զուտ հոսքերը:

Աղյուսակ 6[25] *2018 և 2019 թվականների հունվար-հունիս ամիսներին կատարված ընդհանուր ներդրումները և զուտ հոսքերը*

| | 2018 թ. հունվար-հունիս | | 2019 թ. հունվար-հունիս | | Բացարձակ փոփոխությունը | |
|---|---|---|---|---|---|---|
| | Զուտ հոսքեր | | Զուտ հոսքեր | | | |
| | Ընդամենը ներդրումներ | Որից՝ ուղղակի ներդրումներ | Ընդամենը ներդրումներ | Որից՝ ուղղակի ներդրումներ | Ընդամենը ներդրումներ | Որից՝ ուղղակի ներդրումներ |
| Ընդամենը | -50 894 | 80 222 | 202 089 | 16 087 | 252 983 | -64 135 |

[25] https://mineconomy.am/media/7487/nerdrumayin_barepoxumneri_qartez.pdf

## 3.2 Ներդրումային քաղաքականության բարելավմանն ուղղված քայլերը Հայաստանի Հանրապետությունում

Տարիներ շարունակ մի շարք քայլեր են ձեռնարկվում Հայաստանի Հանրապետության ներդրումային քաղաքականության բարելավման համար: Նախկինում ստեղծված ծրագրերը նոր թափ են ստացել հատկապես 2018-2019 թվականներին: Տեղի բիզնեսը զարկ տալու համար կառավարությունը ընդունել է մի շարք օրենքներ, որոնք նպաստում են ներդրումների աճին և ընդհանուր ներդրումային վիճակի բարեփոխմանը: Այսպես երկրում գործում են մի շարք արտոնություններ նորաստեղծ և արդեն գործող ձեռնարկությունների համար: Արտոնությունների առանձնացված խումբ էլ գործում է օտարերկրյա ներդրումների համար, որը գրավում է օտարերկրյա ներդրողին: Արտոնություններից զատ կատարվել են մի շարք քայլեր ներդրումային քաղաքականության բարելավման համար:

1. Կնքվել են ազատ առևտրի համաձայնագրեր ԱՊՀ երկրների մեծամասնության հետ, որոնց բնակչության ընդհանուր թիվը կազմում է շուրջ 250 մլն.:
2. Կնքվել են երկկողմ համաձայնագրեր 43 երկրների հետ, որոնք ուղղված են ներդրումների փոխադարձ խրախուսմանն ու պաշտպանությանը:
3. Հայաստանի Հանրապետությունը անդամակցել է Ներդրումային Վեճերի Կարգավորման Միջազգային Կենտրոնին:
4. Այժմ Հայաստանի Հանրապետությունը օգտվում է նաև ԱՄՆ-ի, Ճապոնիայի, Կանադայի, Շվեյցարիայի և Նորվեգիայի «Արտոնությունների ընդհանրացված համակարգերից»:
5. Հայաստանը ընդգրկված է ԵվրոՄիության կողմից տրամադրվող «Արտոնությունների ընդհանրացված համալրված համակարգ» առևտրային ռեժիմին:
6. 2017 թվականին Եվրոպական միությունն ու Հայաստանը ստորագրեցին «Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագիրը»: 2018 թվականի հունիսի 1-ից համաձայնագիրը պայմանական կիրարկման փուլում է:

## Ազատ տնտեսական գոտիները

Ազատ տնտեսական գոտիները (ԱՏԳ) առանձնացված տարածքներ են, որտեղ օտարերկրյա ձեռնարկատերերին և ներդրողներին թույլատրվում է ծավալել տնտեսական գործունեություն՝ օգտվելով առավել ազատ պայմաններից: Նմանատիպ տնտեսական գործունեություն կարող է հանդիսանալ օրինակ արտադրությունը, գույքի ձեռքբերումը, առևտուրը և այլն: Ազատ տնտեսական գոտիների ստեղծումը նպատակաուղղված է ներդրումների ներգրավմանը, նոր աշխատատեղիների ստեղծմանը, հատկապես օտարերկրյա ներդրողների գրավմանը: Այն ուղղված է նաև Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակի զարգացմանն: Ազատ տնտեսական գոտիների վերաբերյալ բոլոր հարցերը կարգավորվում են «Ազատ տնտեսական գոտիների մասին» ՀՀ օրենքով:[26]

Ըստ այդ օրենքի ԱՏԳ կարող է ստեղծվել կամ Հայաստանի Հանրապետության կառավարության նախաձեռնությամբ, կամ մասնավոր նախաձեռնությամբ:

Ազատ տնտեսական գոտու շահագործող համարվում է համապատասխան թույլտվություն ստացած և կազմակերպչի հետ պայմանագիր կնքած իրավաբանական անձը, ձեռնարկատերը կամ օտարերկրյա կազմակերպության ներկայացուցիչը: Ազատ տնտեսական գոտու շահագործող դառնալու համար հարկավոր է հայտ ներկայացնել լիազոր մարմին՝ տվյալ դեպքում էկոնոմիկայի նախարարություն: Շահագործողի թույլտվությունը տրվում է կառավարության կողմից՝ հայտատուի կողմից ներկայացված գործարար ծրագրի գնահատման եզրակացության հիման վրա:

Ինչ վերաբերում է արգելքներին, ապա ազատ տնտեսական գոտում չեն կարող իրականացվել ռադիոակտիվ նյութերի արտադրություն և առևտուր, զենք և զինամթերքի, պայթուցիկի արտադրություն, ինչպես նաև թմրամիջոցների և հոգեմետ միջոցների արտադրություն: Արգելվում է նաև առանց մաքսային հսկողության ֆիզիկական անձանց, ապրանքների և տրանսպորտային միջոցների ազատ մուտքն ու ելքը:

[26] https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=125871

Հայաստանի Հանրապետությունում գործում են մի շարք ազատ տնտեսական գոտիներ, որոնցից առաջինը եղել է «Ալյանս» տնտեսական գոտին:[27]

*«Ալյանս» ազատ տնտեսական գոտի*

2013 թվականի հուլիսի 18-ի որոշմամբ, ազատ տնտեսական գոտու մասին օրենքի ընդունումից հետո առաջին կազմակերպիչը դարձավ «Սիտրոնիկս Հայաստան» ՓԲԸ-ն, իսկ 2013 թվականի օգոստոսի 1-ին բացվեց առաջին ազատ տնտեսական գոտին՝ «Ալյանս» տնտեսական գոտին: Այն կազմակերպվել է «ՌԱՕ ՄԱՐՍ» ՓԲԸ և «ԵրՄՄԳՀԻ» ՓԲԸ-ի տարածքներում: Ալյանս տնտեսական գոտու տարածքում կարելի է գործունեություն ծավալել դեղագործության, բիոտեխնոլոգիաների, տեղեկատվական տեխնոլոգիաների, արդյունաբերական դիզայնի, հեռահաղորդակցության և Հայաստանի Հանրապետության տարածքում չարտադրվող ապրանքների արտադրության ոլորտներում:

Ալյանս տնտեսական գոտուն տրամադրվեցին մի շարք արտոնություններ, որոնք են.

1. Ընկերությունը ազատվեց ավելացված արժեքի հարկից,
2. Ազատվեց ներմուծման և արտահանման մաքսատուրքից,
3. Շահութահարկից,
4. Գույքահարկից,
5. Չկան նաև արժութային սահմանափակումներ, շահագործողը կարող է ազատ տնօրինել կապիտալի շահույթը:

Ըստ մեր օրենսդրության տրամադրվող արտոնությունները եզակի են, քանի որ այն առավելագույնն է տրամադրում ներդրողին: Որպես համեմատական Չինաստանում գործող ազատ տնտեսական գոտիների համար կառավարությունը, որպես արտոնություն տրամադրում է միայն շահութահարկի կրկնակի նվազում՝ 30 տոկոսի փոխարեն դարձնելով 15 տոկոս: Իհարկե պատճառը նաև ընկերությունների

[27] https://www.mineconomy.am/page/255

անհամեմատ շատ քանակն է, ի տարբերություն Չինաստանի Հայաստանում մինչև 2016 թվականը հաշվարկված էին ընդամենը 15 ազատ տնտեսական գոտու ընկերություններ:

Ներկա դրությամբ «Սիտրոնիկս» ԲԲԸ-ն տեղեկատվական տեխնոլոգիաների, միկրոէլեկտրոնիկայի և հեռուստահաղորդակցության ոլորտներում առաջատար մատակարարն է Ռուսաստանում և ԱՊՀ երկրներում: Այն աշխատանքներ է տանում ընդլայնելու իր գործունեությունը դեպի Արևելյան Եվրոպա, Մերձավոր Արևելք և Աֆրիկա: «Սիտրոնիկս Հայաստան» ՓԲԸ-ն հանդիսանում է 100 տոկոսանոց դուստր ձեռնարկություն, որը լիարժեք իրավասու է կառավարել իր Հայաստանյան ակտիվները:[28]

*«Մերիդիան» ազատ տնտեսական գոտի*

«Մերիդիան» ազատ տնտեսական գոտին ստեղծվել է 2014 թվականի փետրվարի 27 ին, «Մերիդիան Հոլդինգ» ՓԲԸ-ի տարածքում: Որպես կազմակերպիչ ճանաչվել է «Մերիդիան Ազատ տնտեսական գոտի» ՓԲԸ-ն: Որպես ազատ տնտեսական գոտու իր գործունեությունը սկսվել է 2015 թվականի մարտի 12-ից:

«Մերիդիան» ԱՏԳ-ն պլատֆորմ է, որը համապատասխան պայմաններ է տրամադրում ոսկեգործությամբ, ադամանդագործությամբ և ժամագործությամբ զբաղվող ընկերությունների համար:

2014 թվականի ապրիլի 4-ին կնքվեց պայմանագիր ազատ տնտեսական գոտու կազմակերպման մասին՝ ՀՀ կառավարության, ի դեմս էկոնոմիկայի նախարարության և «Մերիդիան ազատ տնտեսական գոտու» միջև: Պայմանագրի համաձայն ազատ տնտեսական գոտու գործունեության ժամկետը 10 տարի է:[29]

---

[28] http://fez.am/arm/index.php?pu=43#metka

[29] http://www.meridianholding.am/home-am/#meridian-fez

*«Մեղրի» ազատ տնտեսական գոտի*

Սյունիքի մարզի Մեղրի համայնքում, Իրանի Իսլամական Հանրապետության հետ սահմանին ստեղծվել է «Մեղրի» ազատ տնտեսական գոտին: Մեկնարկը տրվել է 2017 թվականի դեկտեմբերի 15-ին:

«Մեղրի» ԱՏԳ-ն իր գործունեությունն է ծավալում գյուղատնտեսության, էլեկտրականության մատակարարման, արևտրի, մասնագիտական գոծունեության, փոխադրումների և պահեստային տնտեսության, զբոսաշրջության և մշակույթի ոլորտներում:

Ազատ տնտեսական գոտին նախատեսվել է կառուցել 2 փուլով: Առաջին փուլը ավարտվել է 2017 թվականին: Այդ ժամանակ ապահովվեցին նվազագույն նախապայմանները աշխատանքների մեկնարկի համար: Դեկտեմբերին տեղի ունեցավ ԱՏԳ-ի բացման արարողությունը: Այս տնտեսական գոտու հիմնական նպատակը Իրանի հետ սահմանային առևտրի և զբոսաշրջության ակտիվացումն է: Ինչ վերաբերում է երկրորդ փուլին, այս փուլի վերաբերյալ աշխատանքները վերսկսվեցին 2018 թվականից, որի արդյունքում նախատեսվում է տարածքի հավելյալ 70 հեկտարի ավելացում, հենց բուն ԱՏԳ-ի գործունեության և ենթակառուցվածքների ընդլայնում:

«Մեղրի» ազատ տնտեսական գոտին խոստումնալից ծրագիր է, համաձայն որի ծրագրում ընդգրկված կլինեն տեղի գյուղատնտեսությունը, արդյունաբերությունը, զբոսաշրջությունը և մի շարք այլ ոլորտներ: Նպատակ է դրված, որ «Մեղրի» ազատ տնտեսական գոտում կներգրավեն 50-70 ընկերություններ և այդպիսով կապահովի 1500 նոր աշխատատեղ: Ըստ ծրագրի պետք է արտահանվի շուրջ 250 մլն դոլարի ապրանք և ծառայություններ:

Ազատ տնտեսական գոտու գործունեության ժամկետը 50 տարի է:[30]

---

30 https://hy.wikipedia.org/wiki/%D5%84%D5%A5%D5%B2%D6%80%D5%AB_%D5%A1%D5%A6%D5%A1%D5%BF_%D5%BF%D5%B6%D5%BF%D5%A5%D5%BD%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6_%D5%A3%D5%B8%D5%BF%D5%AB

*«Էկոս» ազատ տնտեսական գոտի*

2018 թվականին ՀՀ կառավարության որոշմամբ Հրազդանում ստեղծվեց «Էկոս» ազատ տնտեսական գոտին, որը մասնագիտացված է ՏՏ և բարձր տեխնոլոգիաների ոլորտում: Նախագծի նպատակն է ներգրավել օտարերկրյա ուղղակի ներդրումները, զարգացնել բարձր և տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում հայկական արտադրության որակը և ծավալը և նոր աշխատատեղիներ ստեղծել: Ակնկալվում է Հրազդանում ստեղծել բլոկչեյն տեխնոլոգիաների վրա հիմնված գործունեություն, որտեղ կիրագործվի ամպային տեխնոլոգիաների և հաշվարկման օգտագործում և ծառայությունների մատակարարում ինչպես Հայաստանի Հանրապետության տարածքով այլև Հայաստանից դուրս:

«Էկոս» ԱՏԳ-ում նախատեսվում է իրագործել ծրագիրը մինչև 2043 թվականը, մինչ այդ ներգրավել շուրջ 200 ընկերության, իսկ մինչ 2021 թվականը արդեն 50 ընկերության: Համաձայն այս ծրագրի ստեղծվելու է 22 նոր աշխատատեղ, իսկ ընկերությունների ներգրավման արդյունքում աշխատատեղիների քանակը կավելանա 300-ով:

«Էկոս» ազատ տնտեսական գոտու գործունեության ժամկետը սահմանվել է 25 տարի:[31]

[31] https://armeniasputnik.am/economy/20180830/14150572/armenia-hrazdan-ashxatatex.html

## Մասնավոր ներդրումային ծրագրերը

Երկրի տնտեսության համար շատ կարևոր տեղ են զբաղեցնում մասնավոր ներդրումները: Այժմ շատ երկրների պրակտիկան է պետական հանդիսացող մի շարք ձեռնարկությունների և ծառայությունների փոխանցումը մասնավորին: Ամենա վառ օրինակը Չինաստանն է, որի տնտեսական աճը եղել է հենց այս հանգամանքի շնորհիվ: Մասնավորին փոխանցելը ունի մի շարք առավելություններ՝

1. Պետական հատվածը իրենից թոթափում է մի շարք ծառայություններ իրականացնելու պարտավորությունը,
2. Թույլ է տալիս զարգացնել և եկամտաբեր բիզնես ունենալ մասնավոր հատվածին,
3. Ունենում է ավելի զարգացած մասնավոր ձեռնարկություններ քան պետական,
4. Հոգում է աշխատատեղիների ստեղծման հարցը,
5. Ձեռնարկությունների մասնավորեցումը հնարավորություն է տալիս պետական մի շարք հիմնարկներ զարգացնել և նոր շունչ տալ:

Հայաստանի Հանրապետությունում գործում են բազմաթիվ ձեռնարկություններ, որոնց թիվը տարեցտարի աճում է: Պետության պարտավորությունն է աջակցել նոր ստեղծվող գաղափարներին և դրանով ապահովել տնտեսության աճը: Երկրում արդեն կան մի շարք մասնավոր ներդրումային ծրագրեր, որոնցից շատերը իրենց արդյունավետությունը արդեն ցույց են տվել:

*Շափյուղայի արփադրության կազմակերպում*

Շափյուղան պահանջված և բարձր որակի քար է, որն ունի լայն կիրառում և՛ գիտության և՛ տեխնիկայի բնագավառում: Իր բարձր կարծրությամբ այն զիջում է միայն ադամանդին, ունի նաև բարձր հալման ջերմաստիճան և ամրություն: Շատ մեծ կիրառում ունի ադամանդագործության, ոսպնյակների արտադրության, տիեզերանավերի արդտադրության և բազմաթիվ այլ բարձր տեխնոլոգիաների սարքավորումների համար: Բյուրեղների արտադրությունը տարածված էր դեռ ԽՍՀՄ ժամանակշրջանում, այդ ժամանակ ձևավորվում էին կենտրոններ արտադրության համար, որոնցից մեկը ստեղծվեց Հայաստանում: Այդ ժամանակահատվածում

Հայաստանում աճեցվել են բազմազան բյուրեղներ, նաև հենց շափյուղաներ: Հայաստանը եղել է շափյուղայի արտադրության և կիրառման մակարդակով առաջին եռյակ պետությունների շարքում: ԽՍՀՄ փլուզումից հետո շափյուղայի արտադրությունը ամբողջովին դադարեցվեց: Շափյուղայի աճեցման Հայաստանյան մեթոդը յուրահատուկ էր և լավագույնն էր իր ծավալով:

Այժմ նպատակ է դրված, օգտագործելով ԽՍՀՄ տարիներին շափյուղայի արտադրությամբ զբաղվող մասնագետների փորձը վերականգնել արտադրությունը: Նախատեսվում է 5 տարվա ընթացքում զարգացնել այն, նոր սարքավորումներ ներկրել, դրանց թիվը հասցնելով 60-ի: Սարքավորումների ներկրմամբ նպատակ է դրված շափյուղայի ադրտադրությունը դարձնել շուկայի մասնաբաժնի 10%-ը: Այս պայմաններում ներդրումների ընդհանուր գումարը կազմում է 41 մլն. պ.մ: Ընկերության հասույթը, ըստ կանխատեսումների 5 տարում կկազմի 47 մլն. Պ.մ: Սա նշանակում է,որ Հայաստանը կդառնա արտադրությամբ առաջատարներց մեկը: Կարևոր հանգամանք է նաև, որ արտադրության վերաբացմանբ աշխատատեղիներ են ստեղծվում և աջակցվում է բարձր տեխնոլոգիաների ոլորտը:

*Ջերմափան կառուցում*

Ըստ այս ծրագրի նախատեսվում է ստեղծել բարձր տեխնոլոգիաներով աշխատող գյուղատնտեսական արտադրություն: Ծախսելով քիչ ռեսուրս ստանալ ավելի շատ ծավալի և էկոլոգիապես մաքուր գյուղմթերք: Իր հերթին ծրագրի իրականացման արդյունքում հնարավոր կլինի ապահովել բարձր շահույթ, ստեղծել աշխատատեղիներ, զարգացնել տեղի գյուղատնտեսությունը: Ծրագրի նպատակն է առաջնահերթ ստեղծել կենսառեակտոր, որի շնորհիվ հնարավոր կդառնա կենսագազի և կենսապարարտանյութի արտադրությունը: Այն կարտադրի գազ սեփական աշխատանքի համար, որը արդեն հանդիսանում է էներգախնայող: Այսպիսով ստանալով սեփական արտադրության գազ ջերմատունը կբերի 18-20% շահույթ: Կենսառեկտորի արտադրությունից արտադրվում է ոչ միայն գազ, այլ նաև կենապարարտանյութ, որը ըստ հաշվարկների իր ցուցանշով գերազանցում է

Հայաստանում առկա քիմիական պարարտանյութերին: Կենսապարարտանյութի վաճառքից ստացված շահույթը կկազմի 180 000 եվրո:

*Տրակտորների արտադրություն*

Այս ծրագրի նպատակն է զարգացնել 30-85 ձիաուժ հզորությամբ տրակտորների արտադրությունը: Փորձնական նմուշը նախագծվել է 2010 թվականին և արտադրվել 2011-ին, որի արդյունքում մեծ հավանության է արժանացել: Արտադրության ծավալները մեծացնելու համար ստեղծվել են բոլոր անհրաժեշտ պայմանները՝ արտադրական տարածքներ, բերվել են բարձակարգ սարքավորումներ, վերապատրաստվել են և որակի բարձրացում են ստացել մի շարք մասնագետներ: Աշխատանքների իրականացման համար ընկերությունը պայմանագիր է կնքել և համագործակցում է արտասահմանյան կազմակերպությունների հետ: Հիմնական գործընկեր կազմակերպությունը ռուսական է, իսկ ռուսական արտադրության տրակտորները առաջատարն են շուկայում: Ըստ նախնական պայմանավորվածության ռուսական ընկերությունը ապահովելու է պահեստամասերի ձեռքբերումը: Ըստ հաշվարկների առաջին խմբաքանակի վաճառքը թույլ կտա ստանալ ծախսերը հոգող գումարը և զուգահեռաբար թույլ կտա նոր դետալների արտադրությունը շատացնել: Կազմակերպության նպատակն է ներմուծվող դետալների քանակը հասցնել նվազագույնի, դրա փոխարեն տեղի շուկայում ստանալ անհրաժեշտ դետալները և պահեստամասերը:[32]

[32] http://www.innovcentre.am/hy/bussiness/10800

## Սփյուռքի դերը Հայաստան Հանրապետությունում ներդրումային քաղաքականության բարելավման մեջ

Շատ կարևոր է Սփյուռքի դերը Հայաստանի տնտեսության համար, քանի որ սփյուռքի աջակցմամբ հնարավոր է եղել հսկայական քանակությամբ ծրագրերի իրագործումը, դեպի Հայաստան ներդրումների հոսքի ավելացումը, երկրի տնտեսական վիճակի կայունացումը և այլն: Սփյուռքը մեծ ազդեցություն է ունեցել Հայաստանում զբոսաշրջության, գյուղատնտեսության, տեղեկատվական տեխնոլոգիաների և ծառայությունների մատուցման ոլորտի զարգացման մեջ:

Աշխարհում որպես խոշոր սփյուռք դիտարկվում են՝ չինականը (35 մլն. մարդ), հնդկականը (25 մլն.), ուկրաինականը (12 մլն.), հայկականը (10 մլն) և հրեականը (8 մլն.): Առանձնանում են հրեական և հայկական սփյուռքի համայնքները:

Դեռ 1994-2001 թթ. ըստ EV consulting ընկերության Հայաստան կատարված ներդրումների 69 տոկոսը կատարվել էր սփյուռքի շնորհիվ, իսկ 1998-2004 թթ.-ին կատարվել են շուրջ 275 միլիոն ԱՄՆ դոլարի ներդրում:

Ամենից շատ ներդրումներ կատարվում են Ռուսաստանի Դաշնությունից ՝ շուրջ 61% և ԱՄՆ-ից՝ 15%: Սակայն վերջին երկու տարիների ընթացքում այս ցուցանիշը խիստ իջել է և կրճատվել են ներդրումների քանակը: Դրա հիմնականում պատճառը երկրում տեղի ունեցած քաղաքական իրադարձություններն են:

Կարևոր է նաև սփյուռքի աջակցմամբ մի շարք ծրագրերի իրականացումը: Շատ են ծրագրեր հատկապես կրթական ոլորտներում: Մի շարք սփյուռքի կողմից ֆինանսավորվող կրթական ծրագրերի շնորհիվ բազմաթիվ հայ երիտասարդներ կարողացել են ուսում ստանալ արտերկրում և բարձր վարձատրվող աշխատանքի անցնել:

Արտերկրում ապրող հայերից շատերը տիրապետում են առևտրային, ֆինանսական և SS ոլորտների զգալի ակտիվների, ունեն արտադրական մի շարք ձեռնարկություններ, ինչպես նաև զբաղեցնում են բարձր պաշտոններ պետական համակարգում: Դա նույնպես իր մեծ դերը ունի Հայաստանի համար: Տարբեր երկրներում Հայաստանի

առևտրատնտեսական ներկայացուցչությունների համար մի շարք առավելություններ է տրվում հայ համայնքի շնորհիվ: Կատարվում են հայկական ապրանքների հավաստագրման և ստանդարտացման ուղղությամբ խորհրդատվությունների տրամադրում, տարբեր երկրներում ներմուծման խնդիրների լուծում: Սփյուռքի ջանքերով մեծ ուշադրություն է դարձվում «Պատրաստված է Հայաստանում» բրենդի ձևավորման և առաջխաղացման համար: Նման աջակցությունը փոխադարձ բարենպաստ է և՛ Հայաստանի և՛ սփյուռքի համար: Այն օգնում է հայ գործարարներին դուրս գալ դրսի շուկա, կնքել համագործակցության պայմանագրեր արտասահմանյան կազմակերպությունների հետ: Սփյուռքնել իր հերթին մեծ աջակցություն է ստանում Հայաստանի կողմից:

Կարևոր է նշել նաև Սփյուռքի կողմից ստեղծված հայկական բարեգործական կառույցները և այս կառույցների իրականացվող ծրագրերը Հայաստանում և Լեռնային Ղարաբաղում: Այս բարեգործական ծրագրերը կատարվում են սփյուռքահայերի և համահայկական կազմակերպությունների աջակցման միջոցով: Հայաստանում գործում են սփյուռքի կողմից ստեղծված մի շարք բարեգործական կազմակերպություններ:[33]

*Հայկական բարեգործական ընդհանուր միություն ՀԲԸՄ (AGBU)*

Հայ բարեգործական ընդհանուր միությունը հիմնադրվել է դեռ 1906 թվականին, այն համարվում է աշխարհում ամենախոշոր հայկական հասարակական կազմակերպությունը: Գլխամասը գտնվում է Նյու-Յորքում, իսկ տարեկան միջազգային բյուջեն կազմում է 36 միլիոն ԱՄՆ դոլար: Հայկական բարեգործական ընդհանուր միությունը հսկայական քանակությամբ միջոցառումներ է ձեռնարկել Հայաստանում

1. Կրթության ոլորտում,
2. Մշակույթի ոլորտում,
3. Առողջապահության ոլորտում,
4. Եկեղեցու համար,
5. Ղարաբաղի վերականգնման համար,

[33] https://asue.am/upload/files/amberd-economic-policy/Amberd-28.pdf

ՀԲԸՄ-ի շնորհիվ

1. Ամբողջովին վերանորոգվել է Ստեփանակերտի թիվ 7 դպրոցը: Բացումը տեղի է ունեցել 2006-ի հունվարի 16-ին: Դպրոցում այժմ ուսանում են 808 աշակերտ,
2. Ամբողջովին վերակառուցվել է Գյումրիի թիվ 7 դպրոցը,
3. Վերանորոգվել է Գյումրիի Լորդ Բայրոնի անվան դպրոցը,
4. Կառուցվել է Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին,
5. Երևանի Սուրբ Երրորդություն եկեղեցին,
6. Գյումրիի Սուրբ Հակոբ եկեղեցին,
7. Վանաձորի Սուրբ Գրիգոր Նարեկացի,
8. Նոր Նորքի Սուրբ Սարգիս և մի շարք այլ եկեղեցիներ,
9. Վերակառուցվել է Խրիմյան հայրիկ ցուցասրահը,
10. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի տարեկան բյուջեի շուրջ 70 տոկոսը հատկացվում է միության կողմից,
11. Արցախի վերաբնակեցման ծրագիրը և մի շարք այլ ծրագրեր:[34]

*«Հայաստան» համահայկական հիմնադրամ*

«Հայաստան» համահայկական հիմնադրամը ստեղծվել է 1992 թվականին Հայաստանի Հանրապետության նախագահի հրամանագրով: Հիմնադրամի ներկայացուցչություններ գործում են 22 երկրներում: Հիմնադրամի միջոցների հաշվին կառուցվել են ճանապարհներ, դպրոցներ, մանկապարտեզներ, հիվանդանոցներ, կատարվել են ջրագծերի անցկացման և գազատարերի կառուցման աշխատանքներ:

Առաջին խոշոր իրականացված ծրագիրը եղել է 1992-1995 թթ.: «Ձմեռ» մարդասիրական ծրագրի շրջանակներում հիմնադրամը սկսեց բնակարանաշինություն՝ 1988-ի

[34] https://hy.wikipedia.org/wiki/%D5%80%D5%A1%D5%B5%D5%AF%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6_%D5%A2%D5%A1%D6%80%D5%A5%D5%A3%D5%B8%D6%80%D5%AE%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6_%D5%A8%D5%B6%D5%A4%D5%B0%D5%A1%D5%B6%D5%B8%D6%82%D6%80_%D5%B4%D5%AB%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6

երկրաշարժի հետևանքով տունը կորցրածների համար: Բնակարաններ տրամադրվեցին Գյումրիում, Վանաձորում, Ստեփանավանում և Սպիտակում:

Հիմնադրամի ֆինանսավորմամբ կառուցվեց Արցախի «Հյուսիս-հարավ» ավտոմայրուղիները, որը թույլ տվեց կապել ԼՂՀ-ն քաղաքների և գյուղերի միջև: Ստեղծվեց «Արցախի վերածնունդ» ծրագիրը, որի արդյունքում կազմակերպված հեռուստամարաթոնի ընթացքում հավաքված միջոցների շնորհիվ հնարավոր եղավ վերականգնել Մարտակերտի և Հադրութի շրջանները: Աշխատանքները կատարվում էին միանգամից մի քանի ոլորտներում՝ գյուղատնտեսություն, առողջապահություն և դպրոցաշինություն: 2013 թվականին հեռուստամարաթոնին հավաքված միջոցների շնորհիվ հնարավոր եղավ կառուցել Հայաստանը և Լեռնային Ղարաբաղը միմյանց կապող Վարդենիս-Մարտակերտ ավտոճանապարհը:

«Հայաստան» հիմնադրամի իրագործած ծրագրերի շնորհիվ հավաքվել է ընդհանուր ավելի քան 235,800,000 ԱՄՆ դոլար:

*«Թուֆենկյան» հիմնադրամ*[35]

«Թուֆենկյան» հիմնադրամը հիմնադրել է 1999 թ. ամերիկահայ գործարար և բարերար Ջեյմս Թուֆենկյանը՝ Երևանում: Իր ֆինանսավորմամբ ծրագրեր են իրականացվել Հայաստանում, այնուհետև Արցախում: 2004 թվականին Արցախում բարեգործական ծրագրեր իրականացնելու նպատակով բացվում է «Թուֆենկյան» հիմնադրամի Երևանի գրասենյակի մասնաճյուղը Ստեփանակերտում: Այս մասնաճյուղի աշխատանքների մեջ էր մտնում սահմանամերձ շրջանների վերաբնակեցման ուղղվածությամբ քայլերի ձեռնարկումը և իրագործումը: Հիմնադրամը աշխատանքներ է իրականացրել Արցախում վերաբնակեցման նպատակով: Հովանավորվել է Հադրութի շրջանի գյուղերից մեկը: Կառուցվել են տասնութ տուն, քանի որ բնակիչների տները պատերազմի տարիներին ավերվել էին: Բնակիչներին նոր տներով ապահովելուց զատ հիմնովին վերանորոգվեց գյուղի դպրոցը, կառուցվեց մանկապարտեզ, գյուղապետարան և բուժկետ: Հիմնադրամի միջոցներով Իշխանաձոր գյուղում

---

[35] https://library.anau.am/images/stories/grqer/Amberd/Amberd-28.pdf

կառուցվել է բուժամբուլատորիա 2000 բնակչի սպասարկման համար: Կարևոր են նաև իրականացված աշխատանքները կրթության ոլորտում: Հիմնադրամը իրականացնում է «Տաղանդավոր երիտասարդներին ֆինանսական աջակցություն» ծրագիրը, որի նպատակն է աջակցել ԼՂՀ տաղանդավոր երեխաներին և ֆինանսավորել նրանց ուսումը:

*Հայ օգնության միություն (ՀՕՄ)*

Սփյուռքի հայության ջանքերով իր օգնությունն է իրականացնում Հայ օգնության միությունը: Հիմնվելով 1910 թվականին Ամերիկայի Միացյալ Նահանգներում, հիմնադրամը ծառայում էր հայ կանանց բարեսիրական գործունեությանը: Մեծ դեր ունի առողջապահության, կրթական և տնտեսական ծրագրերի իրագործման գործում: Հիմնադրամի ստեղծմանը աջակցել են սփյուռքը ներկայացնող բազմաթիվ հայ կանայք: Ձևավորվում էին հայ կանանց խմբակներ, որոնք բարեգործական ծրագրեր էին կազմակերպում և իրագործում: Իրենց անվիճելի օգնությունն են ունեցել 1988-ի երկրաշարժի ժամանակ:

*Հայ օգնության ֆոնդ (ՀՕՖ)*

Հայ օգնության ֆոնդը ստեղծվել է 1988 թ. երկրաշարժի ավերածություններից հետո՝ Հայաստանին օգնություն ցուցաբերելու համար: Այն Հայաստանի Առաքելական եկեղեցու ԱՄՆ-ի Արևելյալ թեմի բարեգործական կազմակերպություն է: Ֆոնդի շնորհիվ ամերիկյան հայության կազմակերպած օգնությունը հնարավոր եղավ ուղարկել Հայաստան: Ֆինանսավորվեցին տասնյակ մանկատներ և ծերանոցներ: Ի սկզբանե ֆոնդը ստեղծվել էր, որպես մարդասիրական օգնության ֆոնդ, սակայն տարիների ընթացքում այն սկսեց աջակցել ավելի շատ զարգացման ծրագրերին: Բազմաթիվ միջոցառումներ են իրականացվել շինարարության, գյուղատնտեսության, առողջապահության, կրթության և գիտության ոլորտներում: Հատուկ ուշադրություն է դարձվել հատկապես դպրոցաշինությանը: Հայ օգնության ֆոնդի ջանքերով նորոգվել է Երևանի լսողության խանգարումներ ունեցող երեխաների համար գիշերօթիկ դպրոցը: Խոշոր շինարարական աշխատանքներից էր Ստեփանավանի «Սուրբ Վարդան»

բնակելի թաղամասի կառուցապատումը: Ավանի կառուցումից զատ հավելյալ 1,5 մլն ԱՄՆ դոլար փոխանցվել է Հայաստանի Հանրապետության կառավարությանը, որը պետք է ծառայեր Ստեփանավանում և Վանաձորում բնակարանների կառուցմանը: Հայ օգնության ֆոնդի շնորհիվ հնարավոր եղավ Սուրբ Էջմիածնի Գևորգյան ճեմարանի վերակառուցումը և վերաբացումը:

ՀՕՖ-ը հանդիսանում է առաջին բարեգործական կազմակերպությունը, որի ջանքերով և տրամադրված ֆինանսական միջոցներով հնարավոր եղավ երիտասարդների կրթության վարձի խնդիրը լուծել: Ստեղծվեց «Գյուլամիրյան» ծրագիրը, որի շնորհիվ վարձի փոխհատուցում ստացան տասնյակ երիտասարդներ և կարողացան իրենց ուսումը շարունակել մարզերի և Երևանի համալսարաններում: Բացի ուսման վճարի փոխհատուցումից հայ օգնության ֆոնդը տրամադրում է նաև ուսանողներին կրթաթոշակ և տարատեսակ կենցաղային հարցերում է օգնություն ցուցաբերում:

Դեռ 2000 ականներին հայ շրջանավարտ բժիշկները հիմնեցին Հայ օգնության ֆոնդի բժիշկների ընկերությունը, որի միջոցով իրականացրեցին մի շարք բարեգործական քայլեր ՀՀ-ում: Կազմակերպվեցին միջազգային դասընթացներ, որի ընթացքում վերապատրաստավորվեցին մի շարք մարզային բժիշկներ:

Անմասն չմնաց նաև Լեռնային Ղարաբաղը: Բացի մասնագետների վերապատրաստումից և փորձի փոխանակումից, ԼՂՀ-ի բուժհիմնարկներին հավաքված միջոցներով գնվեցին և նվիրվեցին տեխնիկա և տարբեր տեսակի բժշկական պարագաներ: Հայ օգնության ֆոնդը իր աջակցությունն է ցուցաբերում Լեռնային Ղարաբաղին բազմաթիվ հարցերում: Միջազգային զարգացման գործակալության հետ միասին լայնածավալ աշխատանքներ են իրականացնում ԼՂՀ- ի վերակառուցման համար: Հիմնական աշխատանքները կատարվում են հենց առողջապահության և կրթության ոլորտներում:[36]

[36] https://library.anau.am/images/stories/grqer/Amberd/Amberd-28.pdf

*Ջինիշյան հիշատակի հիմնադրամ (ՋՀՀ)*

Ջինիշյան հիշատակի հիմնադրամը հիմադրվել է 1966 թվականին Վարդան Ջինիշյանի կտակի հիման վրա ԱՄՆ-ում: 1999 թվականից սկսել է իր ակտիվ գործունեությունը Հայաստանում: Հիմնադրամի հիմնական նպատակն էր բազմաթիվ հարցերում օժանդակել և օգնություն տրամադրել Հայաստանին՝ սոցիալական, տնտեսական հարցերում, կրթության և առողջապահության ոլորտներում:

2018 թվականին հիմնադրամը ֆինանսավորել է շուրջ 1800 ուսանողների 100 դպրոցներից, որոնք կարողացել են ֆինանսական աջակցություն ստանալ իրենց ուսումը համալսարանում շարունակելու նպատակով:

10 համալսարանի շուրջ 500 ուսանողների համար կազմակերպվել էին հարթակներ քննարկումների և ուսանողների համար աշխատանք գտնելու հնարավորության համար:

Հայ Առաքելական եկեղեցու հետ միասին Ջինիշյան հիմնադրամը կազմակերպել էր մարզերի ոչ ապահով ընտանիքների երեխաների համար ամառային ճամբարներ, որտեղ բացի ժամանցային ծրագրերից նաև կրթական մի շարք միջոցառումներ էին իրականացնում:

Ամառային ճամբար կազմակերպվել է նաև Վրացական Ախալքալաքի համայնքի հայ երեխաների համար: Մասնակցել են շուրջ 150 երեխաներ 9-14 տարեկան, որոնք կարիքավոր ընտանիքներից էին: Միջոցառումը տեղի է ունեցել 2018-ի օգոստոս-նոյեմբեր ամիսներին և ծախսվել է 4,376 ԱՄՆ դոլար:[37]

Ջինիշյան հիմնադրամը մի շարք քայլեր է կազմակերպել նաև երկրի բիզնես ոլորտում: Այսպես նա հարմար պայմաններով է ապահովել հայ ֆերմերներին իրենց գործունեությունը ծավալելու նպատակով: Ապահովել է նրանց անհրաժեշտ տեխնիկայով և դրամական միջոցներով: Օգնություն ստացել են 250 ֆերմեր Արմավիրից, Արարատից, Վայոց Ձորից և Արագածոտնի մարզերից: Բացի ֆերմերներից աջակցություն տրամադրվել է նաև մարզային ձեռնարկատերերին: Ֆերմերների համար հատկացվել է

[37] https://www.jinishian.org/sites/default/files/JMF%20Annual%20Report%202018_0.pdf

412,371 ԱՄՆ դոլար, իսկ ձեռնարկատերերի ֆինանսական աջակցության համար՝ 81,633 ԱՄՆ դոլար:

Հիմնադրամի աջակցությամբ Ստեփանավան քաղաքում կազմակերպվել են SS ոլորտին վերաբերող ուսուցանող խմբակներ, որտեղ տարբեր տարիքի ուսանողներին ծանոթացնում էին ոլորտի ամենից պահանջված մասնագիտությունների հետ:[38]

## Սփյուռքի դերը տնտեսության տարբեր ոլորտների զարգացման մեջ

### *Ադամանդագործություն և ոսկերչություն*

Հայաստանում գործում են մի շարք ընկերություններ, որոնք վերակառուցվել են կամ ստեղծվել են Սփյուռքի աջակցությամբ: Հայաստանը մեծ ներուժ ունի ադամանդագործության ոլորտում: Միայն 2010-21012 թթ. Հայաստանից ոսկերչական իրերի արտահանումը կազմել է 10-13 մլն. ԱՄՆ դոլար: Հայաստանից արտահանում են հիմնականում Ռուսաստան, Թուրքմենստան, ԱՄԷ և այլն:

Սփյուռքի օժանդակությամբ հայկական ոսկերչական ընկերությունները պայմանագրեր կնքեցին միջազգային մի շարք բրենդների հետ ինչպիսիք են Jacob's Jewelry, Simon G Jewelry և այլն:

2001 թվականին Սփյուռքահայ ներդրողների կողմից ստեղծված AWI ընկերությունը կապեր է հաստատում հայկական արտադրողի հետ և օգնում նրան դուրս գալ միջազգային շուկա: AWI ընկերությունը զզբաղվում է միջին գնային սանդղակի ժամացույցների արտադրությամբ: Մեխանիզմները ամբողջությամբ ներմուծվում են Շվեյցարիայից, իսկ ժամացույցները հավաքվում են Հայաստանում և արտահանվում ՌԴ, Հունաստան. Սիրիա, ԱՄՆ և այլ երկրներ: Այս ընկերությունը առանձնանում է նրանով, որ ժամացույցներ է ստեղծում պետական, զինվորական պաշտոնյաներին: Շնորհակալական նվերներ պատրաստելու գործը նույնպես ստանձված է AWI ընկերությանը: Հարկ է նշել նաև, որ հայկական արտադրության ժամացույց կրում է նաև

[38] https://www.jinishian.org/hy/about-us

Հայաստանի Հանրապետության վարչապետը, բազմիցս նշելով դա և այդպիսով նույնպես իր օժանդակությունը ցուցաբերելով հայ արտադրողին:

Ինչ վերաբերում է ադամանդագործությանը, այստեղ նույնպես մի շարք առաջընթացներ կան: Հայաստանում մշակվող ադամանդի հումքը ներմուծվում է հիմնականում Եվրոպական երկրներից, մասնավորապես Բելգիայից: 2014 թվականին հայկական արտադրության ադամանդի ամենածավալուն գնորդը Բելգիան է՝ 42,6 մլն ԱՄՆ դոլար: Ադամանդ արտահանում են նաև Ռուսաստան, Կանադա և Թայլանդ: Թայլանդը, սակայն չի հանդիսանում Հայաստանի ադամանդի հիմնական գնորդ: ԱՄԷ-ից Հայաստանը մեծ քանակությամբ ալմաստ է ներկրում և վերամշակում: Իր հերթին դեպի ԱՄԷ Հայաստանից գնում է հայկական ադամանդ, ճիշտ է քիչ քանակությամբ:

Հիմնականում Հայաստանի ադամանդի որակային հատկանիշները չեն, որ թույլ են տալիս դուրս գալ արտաքին շուկա: Ավելի մեծ նշանակություն ունեն հայ վարպետները: Ադամանդի թերի որակը պայմանավորված է նաև ոչ այնքան էլ ժամանակակից տեխնիկայի օգտագործմամբ: Այդ հարցը բազմիցս բարձրացվել է:

*Գիտության ոլորտում ներդրումները*

Հայաստանը հայտնի է իր մարդկային ռեսուրսով և լավ մասնագետներով: Շատ արտասահմանյան կազմակերպություններ հենց Հայաստանից են գտնում գիտական ոլորտի մասնագետների: Ցավոք Հայաստանում միայն Խորհրդային տարիներին էր գիտության ոլորտը բավականին բարձր հովանավորություն ստանում: Այդ ցուցանիշը մի քանի անգամ ցածր է և դա է պատճառը, որ բազմաթիվ հայ երիտասարդներ չգտնելով աշխատանք հայրենիքում փորձում են իրենց արտերկրում: Համեմատականի համար եթե խորհրդային տարիներին Հայաստանում գիտության ոլորտի զարգացմանը հատկացվում էր տարեկան 600 մլն ԱՄՆ դոլարին համարժեք դրամ, ապա այժմ այդ թիվը տատանվում է 10-20 մլն: Խորհրդային միությունից հետո գիտության ոլորտի անկումը կապված էր ոչ միայն քիչ հատկացումների այլ նաև արդյունաբերության քայքայման հետ: Փակվեցին մի շարք բարձր տեխնոլոգիական գործարաններ, որտեղի բարձր որակավորված մասնագետները մնացին առանց աշխատանք: Այս

գործողությունների հետևանքը եղավ այսպես կոչված «Ուղեղների հոսքը» և լավագույն մասնագետները սկսեցին լքել երկիրը, շատ շատերն էլ պարզապես դադարեցրեցին իրենց մասնագիտական գործունեությունը և այլ բնույթի գործունեությամբ սկսեցին զբաղվել:

Հայկական սփյուռքը բազմիցս աջակցել է Հայաստանին տարբեր ոլորտներում: Գիտությունը առանձնահատուկ աջակցություն է ունեցել: Սփյուռքի ուժերով սկսեցին իրականցվել միանվագ ծրագրեր գիտության տարբեր ոլորտներում: Ֆինանսավորվեցին և հրատարակվեցին բազմաթիվ գիտական աշխատություններ: Հիմնադրվեցին գիտական մի շարք հիմնարկներ, արդեն գործողներին տրամադրվեց ֆինանասական աջակցություն՝ շենքերի բարելավման, համապատասխան տեխնիկայի ձեռքբերման և սարքավորումների ապահովման համար:

Սփյուռքի կողմից ձեռնարկված մի շարք քայլերի արդյունքում ընդլայնվեց գիտական գործունեությունը Հայաստանում և դուրս բերվեց միջազգային ասպարեզ: Համագործակցության առաջարկներ եղան հայկական ընկերությունների հետ: Փոխադարձ համագործակցության պայմանագրեր կնքվեցին Ռուսաստանի Դաշնության հիմնարար հետազոտությունների հիմնադրամի, Ֆրանսիայի Հանրապետության գիտական հետազոտությունների ազգային կենտրոնի, Բելառուսի գիտության կոմիտեի հետ:

Պետք է նշել նաև, որ սփյուռքը բազմիցս ֆինանսավորել է գիտական ոլորտում աշխատող երիտասարդներին՝ իրենց ուսումը արտերկրում շարունակելու նպատակով:

ՏՏ ոլորտում ներդրումները

Հայաստանի ՏՏ ոլորտի ընկերությունների 80% ստեղծվել է դեռ 2000- ականներին: Այս ոլորտը ՀՀ-ի ամենից արագ զարգացող և խոստումնալիցն է: Դեռ 1998 թվականին Հայաստանում գործում էր 35-40 ծրագրավորման ընկերություն, ինչը խոսում է ոլորտի ուսումնասիրված և մասնագիտացված լինելու մասին:

Վերջին տարիներին ավելանում են սեփական արտադրանքը թողարկող ընկերությունները, որոնց արտադրանքի մեծ մասը յուրացվում է արտերկրում: Սփյուռքի դերը այս ոլորտում կարևոր է նաև այն հանգամանքի պատճառով, որ մեծ է նմանատիպ կազմակերպությունների ստեղծման մեջ սփյուռքի ֆինանսական աջակցությունը:

Հիմնական ՏՏ ոլորտի մեծ ընկերությունները բացվել են հենց սփյուռքահայ ներդրողների տրամադրված միջոցներով: Սփյուռքահայ ներդրող Թոմի Մորոյանի ջանքերով այստեղ բացվել է «Արմ Թեք» համաժողովը: Համաժողովը ամեն տարի իր աջակցությունն է ցուցաբերում ՏՏ ոլորտի մասնագետներին, այն հնարավորություն է տալիս նոր ընկերությունների լուսաբանման, ֆինանսավորման համար:[39]

Կարևոր է նշել նաև «Հայկական տեխնոլոգիաների» գովազդումն և տարածումն սփյուռքի շնորհիվ: Այս հարցում մի շարք աշխատանքներ է իրականացրել Ալեքսիս Օհանյանը, ով Reddit.com -ի համահիմնադիրն է և միջազգային հարթակներում բազմիցս խոսել է և բաձրաձայնել է հայկական տեխնոլոգիաների մասին, Րաֆֆի Կրիկորյանը, ով հանդիսանում է WattzOn.com կայքի համահիմնադիրը և հայտնի է հանրահայտ Twitter-ում փոխնախագահի լինելուց:

[39] http://www.eif.am/arm/projects/armtech-congress/

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Հայաստանում ներդրումային ոլորտը ակտիվ զարգանում է: Օրեցօր նոր ծրագրեր են իրականցվում: Կառավարությունն իր հերթին նույնպես օժանդակում է Հայաստանի ներդրումային ոլորտին: Այնուամենայնիվ կան որոշակի հանգամանքներ, որոնք խոչընդոտ են հանդիսանում ներդրումների ավելի ակտիվ ներհոսքին:

Պատճառները շատ են: Երկրում տեղի ունեցած քաղաքական իրադարձությունները անհետք չմնացին: Չնայած ձեռնարկվող մի շարք քայլերի և միջոցառումների, երկրում տեղի ունեցած գլոբալ փոփոխությունները իրենց ազդեցությունը ունեցան օտարերկրյա ներդրումների վրա: Ինչպես պարզ դարձավ վերջին երկու տարիներին օտարերկրյա ուղղակի ներդրումների ծավալը նվազել է: Որոշ արտասահմանյան կազմակերպությունների նախկին մշտական ներդրումները կտրուկ նվազել են կամ ընդհանրապես դադարել են:

Նվազումները եղել են հեռահաղորդակցության ոլորտում Լիբանանի կողմից: Այն կազմել է **23,6** միլիոն ԱՄՆ դոլար): Նվազում եղել է նաև Ֆրանսիայի կողմից՝ խմիչքների արտադրության ոլորտում, **11,4** միլիոն ԱՄՆ դոլար արժեքով:

Ամենաշատ նվազումները եղել են հանքագործական արդյունաբերության հարակից գործունեության ոլորտում՝ Ջերսիի կողմից: *Լիդիան ընկերությունը 2019 թվականին ներդրում ընդհանրապես չի ունեցել, այն ինչ 2018 թվականին կատարվել էր 42,9 միլիոն դոլարի ներդրում:*

Ներդրումների կտրուկ անկումը հիմնականում պայմանավորված է և՛ կապերի խզմամբ և՛ ներդրողի կողմից ներդրում կատարելու ռիսկայնության բարձրացմամբ: Չնայած նրան որ միջազգային հարթակներում օտարերկրյա ներդրողները բազմիցս նշել են Հայաստանում մի շարք ոլորտների կոռումպացված լինելը, վերջին իրադարձությունների հետևանքով կոռուպցիայի ցուցանշի խիստ նվազումը դեռ չի անդրադարձել ներդրումների հոսքին:

Կառավարությունը մի շարք քայլեր է ձեռնարկում ոչ ռիսկային ներդրումային ոլորտի ապահովման համար: Ներդրումային ոլորտում ապահովությունն բարձրացնելու նպատակով կարելի է իրականացնել հետևյալ մի քանի քայլերը:

1. Ապահովել բաց և կանխատեսելի ներդրումային քաղաքականությունը, որպեսզի ներդրողի համար առավելագույնս պարզ ընթացակարգ լինի և նվազագույնի հացվեն իր մոտ առաջացող հարցերը:
2. Խրախուսվեն մի շարք ծրագրեր և միջոցառումներ: Այս առումով շատ կարևոր է հենց պետական հատվածի աջակցությունը:
3. Հարկավոր է ապահովել հիմնական գործընկերների հետ առևտրի և ներդրումների ազատ իրականացումը: Բարդությունների բացակայումը նույնպես կարող է հիմք հանդիսանալ ներդրումների գրավման համար:
4. Պետության աջակցությունը մասնավոր ներդրողին:

Միջազգային պրակտիկայում հայտնի փորձ է աջակցել սեփական ներդրողին, ապահովելով նրան ոչ միայն կայուն ներդրումային քաղաքականությամբ այլ նաև աջակցել փորձի փոխանակման հարցում:

Իրականացված միջազգային փորձի ուսումնասիրության արդյունքում հետաքրքիր էր Գերմանիայի գործելաոճը:

Գերմանիան համեմատած մյուս եվրոպական երկրների հետ ամենից շատն է հոգում իր ներդրողի մասին և ամեն կերպ աջակցում և ֆինանսավորում է նրան՝ իր բիզնեսի առաջխաղացման համար: Այստեղ խոսքը գնում է ոչ միայն իրավական դաշտում արտոնությունների տրամադրման մասին այլ նաև այն մասին, որ պետությունը ինքն է հոգում մասնագիտացված ձեռնարկատեր ունենալու մասին: Կառավարությունը տրամադրում է ֆինանսավորում փոքր և միջին ձեռնարկատերերին՝ իրենց արտադրանքը կամ ծառայությունը արտերկրում ներկայացնելու նպատակով: Աջակցությունը տրամադրվում է պետական բյուջեից և ունի բազմածավալ բնույթ:

Աջացելով ձեռնարկատերերի ապրանքների ներկայացմանը արտերկրում Գերմանիան ոչ միայն հոգում է իր երկրի արտադրանքի ցուցադրմանը արտերկրում, այլ նաև ապահովում է նոր մտքերի հոսք իր երկիր: Կառավարության աջակցությամբ գերմանական կազմակերպությունները մասնակցել են 268 ցուցահանդեսների և

տոնավաճառների, այդ թվում 21 մասնագիտացված ցուցահանդեսների (վերականգնվող էներգիայի աղբյուրներ և էներգաարդյունավետության տեխնոլոգիաներ):

Բացի այդ, նույնպես պետական բյուջեից, ֆինանսական միջոցներ տրամադրվում են այն փոքր և միջին ձեռնարկատերերին, ովքեր ունեն կայուն և զարգացող բիզնես, ինչպես նաև ունեն 5 տարվա բիզնես վարելու փորձ, ուսումը արտերկրում շարունակելու նպատակով:

Այս պարագայում ձեռնարկատերը ձեռք է բերում իրեն հարկավոր գիտելիքների բազա և դա բանեցնում իր երկրում: Սա հիանալի տարբերակ է նոր գաղափարների ներմուծման, փորձի փոխանակման և նոր հետաքրքիր բիզնես պրոյեկտների ստեղծման համար:

Գերմանիան ջանք չի խնայում իր ուսանողներին համապատասխան կրթություն և լավ մասնագետ դարձնելու մեջ, ինչը ապահովում է հետագայում լավ կադրեր ունենալը և զարգացած երկրի ապահովումը:

Սա հիանալի օրինակ է Հայաստանում կիրառելու համար: Չնայած գործում են կառույցներ, որոնք իրականացնում են նմանատիպ գործունեություն, սակայն ոչ այն ծավալով որը հատուկ է Գերմանիային: Բացի այդ պետական ֆինանսավորման տրամադրումը ձեռնարկատերերին՝ նոր կրթություն ստանալու և փորձի փոխանակման համար բացակայում է:

Հետաքրքիր է նաև ներդրումային միջավայրը ԱՄՆ-ում:

Ներդրումների կարգավորման համար ձևավորված է «Առևտրի դեպարտամենտի տնտեսական վերլուծության բյուրոն», որը ղեկավարում է ամբողջ ներդրումային համակարգը: Այստեղ և՛ քննարկվում են նոր ներդրումային ծրագրերը, և՛ պետական աջակցությունը այս կամ այն ոլորտում, և՛ տրամադրվում է թույլտվություն օտարերկրյա ներդրողին իր գործունեությունը ծավալելու նպատակով: Բացի այդ բյուրոն հենց ինքն է զբաղվում նոր ներդրումային ծրագրեր փնտրելով և ներկայացնում է կառավարության կողմից ֆինանսավորմանը:

Հայաստանում նույնպես վերահսկողություն է իրականացվում ներդրումային ոլորտում, սակայն նմանատիպ առանձին կառույց բացակայում է, որը ամբողջությամբ կկառավարեր ներդրումային ոլորտը:

Չինաստանի ներդրումային միջավայրի կարգավորման փորձը միանշանակ կարելի է կրկնել Հայաստանում:

Չինաստանում հսկայական քանակությամբ պետական ձեռնարկություններ տրվել են կառավարելու մասնավոր հատվածին: Բացի այդ պետությունը բազմիցս օժանդակել է մեծամասշտաբ մասնավոր ձեռնարկությունների ստեղծման գործում: Չինաստանի փորձը՝ պետական հատվածի մեծամասնության մասնավորեցումը իր վրա միայն դրական անդրադարձ է ունեցել: Բացի այն, որ պետական հատվածը թեթևացնում է իր պարտականությունների շրջանակը, կրճատում է իր աշխատանքների քանակը՝ դրանով հսկայական ռեսուրսներ խնայելով: Այդ քայլով պետությունը մեծ աջակցություն է ունենում երկրի ներդրումային ոլորտի զարգացման համար: Մասնավոր ներդրողը իր հերթին ունենում է կայուն բիզնես, որը պետության հովանավորության ներքո է: Բացի այդ ապացուցված է, որ մասնավոր ձեռնարկությունները նույն աշխատանքը կրկնակի ավելի լավ են կատարում քան պետական հիմնարկները:

Պետական հատվածի մասնավորեցումից բիզնեսը հնարավոր է ավելի արագ զարգացնել և ընդլայնել քան պետական հիմնարկ լինելու պարագայում: Սա նաև ապահովում է հավելյալ աշխատատեղիների ստեղծումը և գործազրկության խնդրի լուծումը:

Պետական ձեռնարկությունների մասնավորեցումը Չինաստանին թույլ է տվել, որ ոչ միայն խնայի գումար՝ հաստատությունները պահելու և ղեկավարելու համար, այլ նաև ստացվող եկամուտը ծախսել անապահով ընտանիքներին հատկացումներ տալով:

Այս փորձը միանգամայն կիրառելի է Հայաստանի Հանրապետությունում: Մենք ունենք մեծ քանակությամբ պետական ծառայություն իրականացնող կառույցներ, որոնց մասնավորեցումից առավելություն է շահում և՛ պետությունը և՛ մանսավոր ներդրողը:

Հարկավոր է որդեգրել այս փորձը և կիրառել այն տեղի բիզնեսը զարգացնելու համար:

## ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ


***Օրենքներ և այլ իրավական ակտեր.***

1. Հայաստանի Հանրապետության ներդրումային քաղաքականության հայեցակարգ
2. «Օտարերկրյա ներդրումների մասին» ՀՀ օրենքը
3. Հայաստանի Հանրապետության և այլ պետությունների միջև ներդրումների խրախուսման և փոխադարձ պաշտպանության մասին կնքված համաձայնագրերը
4. Հայաստանի Հանրապետության արտահանմանն ուղղված արդյունաբերական քաղաքականության ռազմավարությունը

***Գրականություն***

5. Ավետիսյան Սամվել-Սփյուռքի ներդրումները Հայաստանի Հանրապետության տնտեսության մեջ. Զարգացման հեռանկարներ, 2015թ:https://library.anau.am/images/stories/grqer/Amberd/Amberd-28.pdf
6. Сукиасян А.А.- Инвестиционная политика зарубежных стран: Методы, условия, недостатки.https://cyberleninka.ru/article/n/investitsionnaya-politika-zarubezhnyh-stran-metody-usloviya-nedostatki/viewer
7. Организация Объединенных Наций- Доклад о мировых инвестиция, 2017 г. https://unctad.org/en/PublicationsLibrary/wir2017_overview_ru.pdf
8. Николаев М.А.- Инвестиционная деятельность 2009г https://library.anau.am/images/stories/grqer/Tntesagitakan/nikolaev-invect.pdf
9. Investment Policy Review of Armenia, United Nations, 2019 https://unctad.org/en/PublicationsLibrary/diaepcb2019d3_en.pdf?fbclid=IwAR02g8kvg7512YsGkSd54dFn-2DPjhoysevw6-Dolh5R2MBAZ0EoYHunBX0

***Հոդվածներ***

10. Օդաբաշյան Վահե-Նորարարություն և ինովացիոն տեխնոլոգիաներ. Խնդիրներ եվ լուծումներ: http://www.noravank.am/img/detail.php?ELEMENT_ID=15532
11. Сердюкова Ольга- Зарубежный опыт привлечения инвестиций в экономику https://law-journal.ru/files/pdf/201705/201705_19.pdf

12. Оспанова А.Н., Тусупова А-Зарубежный опыт привлечения иностранных инвестиций http://be5.biz/ekonomika1/r2013/2837.htm

*Համացանցային կայքեր*

13. http://www.innovcentre.am/hy/bussiness/10800
14. http://www.innovcentre.am/hy/bussiness/30318
15. https://taschkent.diplo.de/uz-ru/themen/wirtschaft/kfw-seite/1464930
16. https://sci-lib.biz/investitsii/opyit-zarubejnyih-stran-privlechenii-vneshnih-75096.html
17. https://www.mineconomy.am/page/255
18. https://mineconomy.am/page/360
19. http://www.meridianholding.am/home-am/#meridian-expo
20. https://hy.wikipedia.org/wiki/%D5%84%D5%A5%D5%B2%D6%80%D5%AB_%D5%A1%D5%A6%D5%A1%D5%BF_%D5%BF%D5%B6%D5%BF%D5%A5%D5%BD%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6_%D5%A3%D5%B8%D5%BF%D5%AB
21. https://armeniasputnik.am/economy/20180830/14150572/armenia-hrazdan-ashxatatex.html
22. https://hy.wikipedia.org/wiki/%D5%80%D5%A1%D5%B5%D5%AF%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6_%D5%A2%D5%A1%D6%80%D5%A5%D5%A3%D5%B8%D6%80%D5%AE%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6_%D5%A8%D5%B6%D5%A4%D5%B0%D5%A1%D5%B6%D5%B8%D6%82%D6%80_%D5%B4%D5%AB%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6
23. https://www.jinishian.org/sites/default/files/JMF%20Annual%20Report%202018_0.pdf
24. https://www.jinishian.org/hy/about-us
25. http://www.eif.am/arm/projects/armtech-congress/
26. https://armeniasputnik.am/economy/20180830/14150572/armenia-hrazdan-ashxatatex.html
27. http://www.meridianholding.am/home-am/#meridian-fez